

Հ Ս Խ Հ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՍՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

X

ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խմբագրեցին

ՍՏ. ԼԻՍԻՅՅԱՆ ԵՎ ՅԷ. ՌԱՅՈՒՆԻՐՅԱՆ



902.6

Հ-72

Ֆրեբրուար 1928 Յերեվան

12198

17498
902.6
Հ-72

Հ Ս Ե Հ

ԿՆՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

X
*Содержание списка и
описания древностей*

**Հ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի
Ց Ո Ւ Ց Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն
Ո Ւ
Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը**

Խմբագրելն

ԱՍ. ԼՐԱԹՅԱՆ ԴԺ ՅԵ. ՆԱՅՏՈՒՐԿՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЙ АЗИИ
и Академии Наук
СССР

Թիֆլիս 1928 Յերեվան

12 JUN 2013

19050

2-я Типография
 Полиграфтр. ВСХИ
 Ул. Ленина, 3.
 Глав.л. 1335. Зак. 1230
 Тираж 1000



9-3581-82

Այս հրահանգը լույս ընծայելով՝ Կենտրոնական Գալտագիտական Բյուրոն ընդառաջ է գնում Հայաստանի գալտագետների արդեն հասունացած կարիքին:

Պետք է հաստատ և միշտ հիշել վոր ամեն յերկրում գլխավոր արտադրական ուժը մարդն է և վոր արդարացի յե լատինական առածը թե՛ «մարդու համար ոտար չըպիտի լինի վոչ մի բան, վոր մարդուն է վերաբերում»: Մյուս կողմից՝ ուսումնասիրելով Հայաստանում այժմ ապրող մարդուն, մասնավորապես հային՝ չըպետք է մոռանալ վոր նա շատ բան է պահպանել այն նախնական մարդու կենցաղից, վորը այս յերկրում հայից շատ առաջ է բնակվել և աշխատել:

Հնագիտությունը, վորպես մարդկության մեծած սերունդների ձեռքերի նյութական ստեղծագործությունները ուսումնասիրող գիտություն՝ վոչ մի խարություն չի գնում առանձին ժողովուրդների միջև: «Ամբողջ մարդկության նյութական հուշարձանները ուսումնասիրելով՝ հնագիտությունը լուսարանում է նրանց ներքին կապակցությունը, ցույց է տալիս նրանց տարածման ժամանակն ու սահմանները, յերևան և բերում այդ հուշարձանների ձևերի ծագման և փո-

փոխութեան պայմաններն որին աջակցութեամբ և
ցուցչ և տալիս նրանց փոխհարաբերութեամբ
մարդու հետ» (Городцов—„Археология“ т. I).

Իր անդուլ հետախուզութեաններով միայն
հնագիտութեանն և հնարավորութեանն տալիս
պարզելու թե ինչպէս և ինչ ճանապարհով և
նախնական մարդը հասել մշակույթի արդի
վիճակին: Միայն հնագիտութեանը կարող և
պատմել այն հնագարջան մարդու մասին, վարի
մասին չի պահպանվել վոչ մի սեղեկութեան—
վոչ գրավոր, վոչ ևլ բանավոր: Հնութեան իրերի
վրա գրեք չը կան, սակայն կան բազմաթիւ ալ
նշաններ, վորոնցով բանիմաց մարդը կարող և
այն հին ժամանակները հասկանալ և պատմել:

Այն ժամանակից ի վեր, ինչ մարդս աս-
բուս և գետնի յերեսին,— իսկ գիտնականները
այս ժամանակամիջոցը հաշվում են մեկ միլիոնից
մինչև 500 հազար տարի— նա թողնում եր իր
կյանքի նյութական հետքեր: Այդ հետքերից
առաջինը՝ այն առարկաներն են, վոր նա կորցնում
եք, յերկրորդը՝ այն մնացորդները, «աղբը», վոր
նա գործածելուց յետո գեն եր շարտում վորպես
անպետք բան: Այդ իրերից մի մասը փթել և,
մյուսը, որինակ՝ քարից, մետաղից, կավից շի-
նածները, մնում են վորպես մարդկային կյանքի
վկաներ գետնի յերեսին: Ամեն իր, վոր մարդու
ձեռով և շինված յեղել, պիտի պահպանվի գի-
տութեան համար: Բայց նախնական մարդը թո-
ղել և վոչ միայն «աղբ»: Մեզ հասել են և նրա
ախնական կայանները գետնափոր բնակարան-

ներով, գյուղեր, բերդատեղիներ, ամրոցներ, նրա
տաանձնակի դամբաններ և ամբողջ գերեզմա-
նոցներ. տաճարներ և պաշտաման վայրեր, ճամ-
փաներ— քարահատակ, փայտ, խճաճածիկ,— կա-
մուրջների հետքեր. ջրանցքներ, հին ջրհորներ,
վստողման առաններ, թումբեր, արհեստանոցներ և
այլն: Այս բոլոր հուշարձանները կարող են գա-
նազան դարերին, ժողովուրդներին և մշա-
կույթներին պատկանել: Նայելով ժամանակին՝
հուշարձանների ընտելին ու նյութը կարող և
տարբեր լինել: Ամեն հուշարձան շատ բան և աս-
տուծ իր ժամանակի մասին:

Հնութեան այս բոլոր հուշարձանների պահ-
պանութեամբ մեզ մոտ զբաղվում և Հայաստանի
Հնութեան Պահպանութեան Կոմիտեն: Հանրա-
պետութեան գեղեցիկ ամբողջ հնագիտական
նյութը, թե գետնի տակ և թե գետնի յերեսին
յեղածը, պատկանում և պետութեան: Ուստի
յերբ մի հնագիտական իր և գտնուվում կամ
գետնի յերեսին, կամ արտը վարելիս, կամ
վորեկ հողի աշխատանքի ժամանակ, գտնողը
պարտավոր և անմիջապես հանձնել Կոմի-
տեին և վոչ մի դեպքում չը սեփականացնել:
Ինքնազուլս պեղումները խտաիւ արգելված են և
պատժվում են դատարանով: Ամեն մի քաղաքա-
ցու պարտականութեանն և, յեթե նա իմացել և
ծածուկ կտտարված պեղումների մասին, անմի-
ջապես հաղորդել Կոմիտեին, կամ նրա ներկա-
յացուցչին գալտուում, կամ յեթե այդպիսինը չը
կա՝ գալգործկումին կամ գյուղխորհուրդին:

Փափառագետը կարող է մեծ ծառայութեան մատուցել գիտութեանը ցուցակագրելով և նկարագրելով իր շրջանում յեղած հնութեանները: Նա ամենքից լավ գիտե թե ում մոտ, վոր անբուժ կան պատահաբար ընկած կամ հատուկ հավաքված հնագիտական իրեր, և լացի դրանց ցուցակագրելուց և նկարագրելուց՝ կարող է համարել տերերին հոժարակամ հանձնել այդ հավաքածուները պետական և տեղական թանգարաններին: Նա կարող է կորուստից փրկել ըզգամթիվ այս ու այն տեղ ցրել յեղած իրերը՝ փոքրերը ժողովելով, խոշորները, դանազան մեծ շենքերին պատկանողները այդ շենքերի մոտ ապահով տեղ առանձնացնելով և վորև է մեկի հսկողութեան հանձնելով, առանց տեղից հեռացնելու (որինակ՝ խաչքարերը, վոչխար—տապանաքարերը, վանական դարդաքանդակները): Փափառագետը կարող է լայն ծախարով կազմակերպել տեղական հնութեանների պահպանութեան գործը: Ամեն գափառագետ պարտական է մաքառել հնութեանների վոչնչացման դեմ և լայն պրոպագանդա մղել այդ ուղղութեամբ:

Հայաստանի դանազան գափառներում գործովում են կենդանիները (մեծ մասամբ մամուռի) աճողին վոսկորները: Նրանց հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է ուշադրութեան դարձնել՝ արդյոք վոսկորների հետ չը կան և քարից շինված իրեր—նեանրի ծայրեր, քերիչներ, դանակներ, վոսկորե ըզեր և այլն: Այսպիսի կենդանական մնացորդներ գտնվում են մեծ խորութեան

վրա և յերևան են գալիս քարահանքերում կամ հեղեղներից լվացված տեղերում: Անհրաժեշտ է անմիջապես կանգնեցնել աշխատանքները մինչև հնութեանց Պահպանութեան Կոմիտեի ներկայացուցչի գալը:

Ներքև բերված են մանրամասն հրահանգներ հնագիտական դանազան տիպի հուշարձանների ցուցակագրութեան և նկարագրութեան համար, ինչպես և տեխնիկական խորհուրդներ:

Պետք է միշտ աչքի տուջ ունենալ հետևյալը:

ա) Ամեն հնագիտական իր կորցնում է գրեթե իր ամբողջ գիտական արժեքը, յեթե ճիշտ հայտնի չէ նրա գյուտի տեղն ու հանդամանքները:

բ) Ամեն հին դերեզման, ամեն մի դամբան գիտութեան համար կորած է համարվում, յեթե նա, թեկուզ միայն մասամբ, ձեռք է արված դանձախույզների կողմից:

գ) Առաջ քան մի հնագիտական իր տեղից փերցնելը, ուշի ուշով պետք է գիտել ինչպես է նա դրված:

դ) Նկարագրելու միջոցին չը կա վոչ մի այնպիսի չնչին մանրամասնութեան, վոր կարևորութեան չուենեա հնագետի համար

Այս ծրագիրը կազմված է գլխավորապես Ուկրայնայի Հնութեանց Պահպանութեան Կոմիտեի կողմից լույս ընծայած «Инструкції та програми для развідок и реєстрації пам'яток археологічних» (1927 թ.) պրոֆ. Ո. Ֆեդորովսկու

աշխատութեան հիման վրա, վերի մեծ մասը հարմարեցրել ենք մեր պայմաններին և տալիս ենք փոխադրութեամբ կամ շատ տեղ թարգմանաբար: Աչքի առաջ ունեցել ենք նաև պրոֆ. Ա. Սպիրցինի «Разведки памятников материальной культуры (1927 թ.) և Ի. Գրարարի «Для чего надо охранять и собирать сокровища искусства и старины» (1919 թ.) գրվածքներն և այլ աղբյուրները:

Հավելվածի մեջ բերված են Հնութեան հուշարձանների վերաբերյալ հանրապետական դեկրետն և Հնութեանների Պահպանութեան Կոմիտեյի կանոնադրութեանը:

Ծրագիրը իր բոլոր հավելվածներով կարգացվել է Հնութեանների Պահպանութեան Կոմիտեյում և նրա հետ համաձայնեցրած:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր ցուցմունքներ

Ամեն հնագիտական հուշարձան ցուցակագրելիս և նկարագրելիս նախ և առաջ անհրաժեշտ է նշել հետևյալը:

1. Ո՞րտեղ և գտնվում հուշարձանը: Գավառ, շրջան, գյուղ: Հեռավորութեանը և ուղղութեանը մերձավոր գյուղից, եկեղեցուց, լճից, գետից, կամուրջից, ճանապարհից կամ այլ կետից, վորը հեշտ է գտնել: Տեղի անունը:

2. Հուշարձանի տեղադրութեանը—գետի յեզրին, լեռան լանջին, դաշտում, ձորի մեջ, քարի վրա... (Այդ վայրերի անունները): Տեղը մեծ մասշտաբի քարտեզի վրա: Պլանը:

3. Հուշարձանի տեղական ժողովրդական անունը: Ավանդութեանները թե ով է շինել, յերբ, ինչի համար, ինչ դեպքի առիթով:

4. Հուշարձանի հետ կապված անահավատութեաններն ու պաշտամունքները:

5. Գեանի յերեսին հավաքած իրերի տեղի ճիշտ նշումը վայրի պլանի վրա:

6. Տեղեկանք՝ շին գտնված արդենք այդտեղ դրանից առաջ իրեր, վորտեղ, ինչքան, ինչ, ում ձեռքով, յերբ և այժմ նրանք վորտեղ են գտնվում:

7. Մոնումենտալ հուշարձանի առանձին մասերի (մուտքի, պատուհանի, պատրհանի...) և այդ մասերում կամ նրանց կողքին գտնված իրերի (կմախքի, գնեքի, անոթի...) տեղի ճիշտ նշումը ըստ աշխարհի կողմերի:

8. Յուրաքանչյուր վայրի (կայանի, գերեզմանոցի, գյուղի...), շենքի, գտնված իրի, ամեն հուշարձանի մանրամասն նկարագրությունը, գծանկարը, նկարը, լուսանկարը, պլանը, յեթև հնարավոր և—նաև եստամպը:

9. Վերջավ լավ և պահպանվել հուշարձանը: Ձե՛ք յեղել խանգարված: Բնության ուժերից թե՛ մարդու ձեռքով: Յերբ և ինչ հանգամանքների մեջ, յեթև ժողովուրդը հիշում և:

10. Ի՞նչ վտանգներ են սպանում հուշարձանի պահպանաթյանը՝ ընտելյունից և մարդուց:

11. Արդյո՞ք դրանից առաջ յեղել և ուսումնասիրված, ո՞ւմ կողմից և յերբ: Ուսումնասիրության արդյունքը վորտեղ և հրատարակված:

12. Յերբ և (տարի, ամիս, օր) նկարագրողը այցելել և նկարագրել հուշարձանը: Նկարագրողի անուն, հոր անուն, ազգանունը, հասցեն, զբաղմունքը:

II. Նախապատմական կայաններ յե՛լ արհեստարոցներ.

Հին ընտկավայրերը, յերբ մարդս ապրելիս և յեղել գետ վրաններում կամ գետնափոր տնակներում, կարող են յերևան գալ այսպես կոչված՝ «կալսարակամ քեթի» մեջ: Բանն այն և, վոր մարդս՝ յերկար ժամանակ մի տեղում ապրելով, թողնում էր իր գործածած ամեն տեսակ իրեր—աղբ, անուխ, մոխիր: Այս ամբողջ նյութը վիժելով տալիս և գետնին ավելի մուգ, յերբեմն բարբոլվին սև գույն: Յերբ ընտկիչները թողնում և յին իրենց գյուղը, գյուղի ամբողջ տարածությունը տարեց տարի սկսում էր հողով ծածկվել, և հետգնետե անկարելի յեր լինում իմանալ թե այդտեղ յերբ եիցե մարդու ընտկարան և յեղել: Կուլտուրական շերտը այնքան ավելի հաստ և լինում, ինչքան ավելի յերկար և մարդս ապրել միևնույն տեղում, յերբեմն մի քանի մետր հաստություն և ունենում, սակայն սովորաբար մեկ մետրից չի անցնում: Վերին՝ բուսական և ստորին՝ մայրհողային շերտերից նա վորոշակի տարբերվում և, վորովհետև միայն այս շերտի մեջ և գտնվում այն ամենը, ինչ վոր տյտեղ ապրող մարդը կամ կորցրել և, կամ գնե և ձգել: Սակայն լինում և և այնպես, վոր կուլտուրական շերտը գույնով դրեթե չի տարբերվում վերին շերտից. այսպես լինում և այն գեղքում, յերբ այդտեղ անընդհատ, մինչև այժմս էլ ապրում են մարդիկ: Այս գեղքում բաժանել ժամանակակից շերտը հնից

հնարավոր և լինում միայն գտնված իրերը ուսումնասիրելով: Պատահում և և այնպես, վոր միևնույն վայրում դանազան դարերում ապրել են դանազան մարդիկ՝ մեծ կամ փոքր տեսողություն ունեցող ընդմիջումներով: Այս դեպքերում կուլտուրական շերտերը իրար կը հաջորդեն՝ մեջեմեջ ունենալով հողի կամ ավազի, մարդկային կուլտուրայի մնացորդներ չը պարունակող շերտեր, ամենաստորին կուլտուրական շերտը կը լինի և ամենահինը: Կուլտուրական շերտերը սովորաբար հայտնաբերվում են այն դեպքերում, յերբ այդ վայրում սկսում են վորակ բան ցանել, գութանը՝ գետինը շուտ տալով՝ յերեսն և հանում հնության իրերը: Կամ յեթե այդ շրջանում վերջը կազմվել և ձորակ, փոս կամ գետինը փլել և, ձորի կամ փուլքի հատած յեզրին կերևա կուլտուրական շերտը լայն սև ժամավենի պես, յերկու հարևան՝ վերին և ստորին՝ ավելի բացազույն շերտերի արանքում: Քանի վոր սովորաբար նախնական մարդը մի կողմից՝ ընակվում եր ջրին ավելի մոտիկ, և մյուս կողմից՝ ընտրում եր ավելի լավ պաշտպանված վայրեր, ուստի սովորաբար այդպիսի ժապավեններ յերևան են գտլիս գետախառնուրդի բարձր յեզրերին կամ գետի վորո՞ման աղեղի վրա: Մեղ մոտ հին կայանները կարող են բացի այդ, յերևան գալ նաև բնական կամ արհեստական քարայրերում:

Ամենահին կայանները պատկանում են հին քարե (պալեոլիտիկ) դարին: Այդտեղ գտնում են մամուռի, ունդյեղջյուրի, հյուսիսային յեղջե-

րուլի, նախնական յեղան և այլ արդեն անհայտացած կենդանիների վոսկորներ՝ նախնական յեղանակով քարից և կայծաքարից շինած իրերի և մարդու գոյության այլ հետքերի հետ միատեղ:

Հաջորդ շրջանի կայանները կը լինեն նեոլիտիկ (նոր քարե) ժամանակից: Նրանք յերևան են գալիս գրեթե ժամանակակից կլիմայի և բնության պայմանների մեջ: Դասավորված են լինում գետերի, լճերի և առհասարակ ջրերի մոտ, վորտեղ կարելի յեր պարապել ձկնորսությամբ: Նեոլիտիկ կայաններում գտնվում են նախնական կալի իրեր, վորդրված և ծակած քարե գործիքներ, մեծ քանակությամբ ձկան վոսկորներ, մոխիր և տնային կենդանիների այրված վոսկորներ:

Այդ դարաշրջանում գտնում են նաև կայծաքարի կամ «սառանի յեղունգի» (որսիդիանի) քարահանքեր և արհեստանոցներ, վորտեղ շատ են պատահում արհեստի նյութերի (քարերի) կտորներ և փչացրած, չավարտած գործիքներ:

1. Ի՞նչ յերկրաբանական շերտի մեջ և կայանը կամ արհեստանոցը: Վերևից և տակից գասավորված շերտերը (սկսած վերևից): Այդ շերտերի հողի կոշտությունը, գույնը, կազմությունը, կարծրությունը, առանձին բովանդակումները, (որինակ՝ ջրաքարերը):

2. Կուլտուրական շերտի հաստությունը (և խորությունը, գույնը և կազմությունը: Կուլտուրական մնացորդները դասավորությունը նրա մեջ

—արդյոք կուտակումներ են կուգժում, շերտավորութիւններ թե՛ ցրված են գետ ու գետն. նրանց քանակը, նկարագրութիւնը: Շերտի հաստութեան կարգը:

3. Արդյոք մարդկային մշակութի հետքերի հետ չեն պատահում մեռած կենդանիների վտակորներ: Նրանց չափերը, շերտի մեջ դասավորութիւնը, նկարագրութիւնը: Շնտ են փթած, կամ քարացած են, ջարդված, փշրված, ալրված:

4. Այլ կուլտուրական մնացորդները սարի լանջերին, քերձերին, գետի յեղերքին, լլուրնիւրի կողքին, ավազների մեջ,—վորոնք կայանի հետ կապ ունեն (մանավանդ յեթե հեղեղն է քանդել կայանը):

5. Կայանի բնած տարածութիւնը և այդ տարածութեան ձևը (սլանը):

6. Չրկան արհեստանոցում գործածված նյութերի (կաշձաքարերի, «ստանի յեղունդի» — որսիդիանի, պղնձի) և գործիքների, կաղապարների, նյութերի մնացորդներ: Նրանց գոտավորութիւնը: նրանց հետ խառն գտնված կուլտուրական իրերը:

7. Չրկան կրակի գործածութեան հետքեր — մոխիր, ալրված փայտ, ածուխ, խոնձված քարեր, խեցիներ...: Նկարը. սլանը:

8. Կուլտուրական շերտի մեջ կամ գետնի մակերեսին պատահած իրերը: Նրանց գոտավորութիւնը, քանակը, վիճակը (ամեն իրի մանրամասն նկարագրութիւնը):

III. Գերեզմաններ յեւ զերեզմանոցներ.

Նոր քարե դարից թաղման ծիսակատարութիւնը մեղ հայտնի չէ: Գիտնականները յենթադրում են, վոր այդ ժամանակ հանգուցայլին պարզապէս այրում էին և հող չէին տանում աճյունի պահպանութեան մասին: Միայն հին մետաղե դարում (բրոնզե) մարդս սկսեց զիմել թաղմանը: Զանազան ժամանակներից և դարերից մեզ հասել են բազմազան ձևի թաղումներ: Հայաստանում պատահում են թաղումներ՝ դիալի ամփոփմամբ կամ դիալի այրմամբ, թաղումներ թմբավոր և անթումբ և ամբողջ գերեզմանոցներ, թաղումներ առանձնակի և խմբական, թաղումներ քարե արկղների, գետնափոր խցիկների կամ հողի հորերի մեջ, կավի կարասների (միակտոր կամ կրկնակի), կավի լոպարանածե կապաղների մեջ, գերանածածկ գերեզմանների մեջ և այլն:

Գերեզմանները յերբեմն գոտավորվում էին խա, գրեթէ իրար կողքին, առանց յուրաքանչյուրի վրա առանձին թումբ բարձրացնելու: Այդպիսի գերեզմանոցները — МОГИЛЬНИКИ — ներկայացնում են մի տափակ, շատ անշան չափով շրջակայքից բարձրացող հրապարակ, վորի գերեզմանատեղի լինելը հայտնաբերվում է սպասարար կամ նշմարվում է հողը նստած գերեզմանների փոսիկներով: Դա մի թումբ գերեզմաններ են, վոր միացած են իրար հետ միևնույն վորոշ ժամանակամիջոցով և վորոշ կուլտուրայով:

Յեթև մի հրապարակում մարդու վտակորնի-
րի հետ դուրս են գալիս ողեր, ապարանջաններ,
զենքեր, կալի ամաններ—պարզ և վոր աչգ անզը
մի գերեզմանոց և, և վոչ թե դա մի պատահա-
կան զուգադիպություն և:

Հնում դիակները զբվում էյին յերբեմն նաև
ուզղակի գեանի (հաճախ մերկ ապառաժոտ հրա-
պարակի) յերեսին զանազան մեծություն ունե-
ցող փոսիկների մեջ՝ գազաններին և թռչուննե-
րին կեր: Այդպիսի թաղման վայրերը Հայաս-
տանում գեռ գրեթե չեն ուսուսնասիրված:

Թմբավոր գերեզմանները յերբեմն դասա-
վորվում են խումբ խումբ, բայց պատահում են
և առանձնակի: Նրանք թե ձևով, թե մեծութամբ,
թե բովանդակությամբ չափազանց բազմազան
են լինում:


1. Գերեզմանոցի հրապարակի բռնած տա-
րածությունը: Ի՞նչ խորության մեջ են յերևան
յեկել գերեզմանները և լ՛նչ ձևի յեն. վնրչափ
խիտ են դասավորված:

2. Յեթև նկատվում են գեռ գերեզմանների
փոսիկները,—նրանց դասավորությունը:

3. Բացողյա թաղումների վայրում գերեզ-
մանափոսերի դասավորությունը և ուզղությունը
բոս աշխարհամասերի:

4. Դամբանների քանակը մի խմբի մեջ:

5. Դամբանների մեծությունը: Թմբի բարձ-
րությունը գեանի յերեսից. տրամագիծը (թմբի
վերևով), շրջագիծը:



6. Թմբի ձևը—կոր, յերկարավուն, ձուածի:
Հասվածագծի ձևը—բարձր, սուր, կլոր, ցածր,
տափակ: Կատարը՝ սուր, կլոր, տափակ, դողավոր:
Վնրանց և գոնվում թմբի գլուխը՝ կենարունում,
կողքին և վնր կողմում (նկարներ):

7. Արդյճք թմբի շուրջը չըկա խրամատ կամ
փոս. նրա խորությունը, ձևը, հասվածագիծը:

8. Թումբերը խիտ թե՞ ցանցատ են տե-
գավորված, ուզից թե՞ ծուռ շարքերով, անկարգ,
մանրերը մեծերի շուրջը թե ալ ձևով: Տարա-
ծությունը թումբերի միջև: (Խմբի պլանը):

9. Գերեզմանաթմբի կազմությունը: Արդյճք
տարբերվում է շրջակա հողի կազմությունից: Նրա
բաղադրությունը — կավ, ավազ, խիճ, կավիճ,
մոխիր, քար. (քարերի մեծությունը): Պատմծ է
քարե պարիսպով կամ քարե ողակով, թե՞ առանց
պատի է: Պարիսպի (ողակի) մեծությունը, կազ-
մությունը, կառուցվածքը: (Պլանը, նկարը):

10. Արդյճք գերեզմանաթմբի մակերեսին
կամ մերձակայքում չըկան վարելու ժամանակ
դուրս յեկած կամ պեղած իրեր՝ (գազանի, անա-
սունի կամ մարդու վտակորներ, մոխիր, խեցիներ,
կոյճաքարի, սատանի յեղունգի, քարե, վտակո-
րե, բրոնզե, յերկաթե իրեր, ապակեղեն, գրամ-
ներ): Նրանց քանակը, մեծությունը, նյութը,
գործածությունը:

IV. Պատահական բացված դամբաններ

Պեղումներ կատարելու իրավունքը վերա-
պահված է մասնագետներին՝ Հայաստանի Հնու-

թյունները Պահպանութեան կոմիտէի թույլ-տալութեամբ և հսկողութեամբ: Սակայն լինում է վոր հեղեղը, կամ բնութեան այլ ուժը, (ստթանք—ՕՍՈՒՅՈՒՅՈՒՅ, յերկրաշարժ...) կամ մարդու աշխատանքը պատահմամբ բանում են գերեզմանի բովանդակութեանը: Այդ պատահմամբ յերևան բերած թաղումների նկարագրութեանը կարող է կատարել և վոչ մասնագետ գալառագետը:

1. Վերահեղ և դրված կմախքը թումբի մեջ, ուղիղ գետնի յերեսին թե՛ ավելի խորը, և ինչ խորութեան վրա: Գուցե կմախք բոլորովին չի՞ յեղել:

2. Կմախքի դիրքը.— ձգված, կողքին կծկված, նստած կամ այլ կերպ: Գլխի և գեմքի ուղղութեանը: Ձեռների դիրքը—արմուսկներին ծոված, կրծքին, ձգված, գլխի տակ դրված:

Վտանների դիրքը—ձգված, ծունկներին, կողքին, գեպի վեր ծոված: Կմախքի յերկարութեանը սանախմարներով (գծանկարներ, նկարներ, լուսանկարներ):

3. Ի՞նչ վիճակի մեջ է պահպանվել կմախքը—ամբողջ, քրքրված, փշրված, ջարդված:

4. Արդյո՞ք բոլոր վտակները ակզումն են: Վորո՞նք են պակաս, և ի՞նչ պատճառով, արդյո՞ք վտակները փթել են, թե կերվել են մկներից և այլ կենդանիներից, թե գուցե վոչ բոլորն են դրված յեղել գամբանի մեջ:

5. Արդյո՞ք չի նկատվում վտակները ներկված լինելը, վեր մասերի և ի՞նչ գույնի: Ի՞նչպե՞ս է

դրված ներկը—արդյո՞ք ներծծվել և վտակոր-ներքի մեջ, թե՛ դրվել է կույտ կույտ, հաս հաս, գուցե ներկի մի շերտով ծածկված և յեղել գետնը կմախքի տակ:

6. Արդյո՞ք կմախքի տակ հատակը ծածկված չէ մոխրով, կեղևով, խոտով, ճյուղերով և այլն: Արդյո՞ք վերևից ծածկված չէ (կամ գուցե վերևից և թափվել) նույն կամ այլ նյութերով (նմուշներ):

7. Յեթե՛ մի քանի կմախք է—նրանց քանակը, մեծութեանը, փոխադարձ գասավորութեանը (գծանկարներ, նկարներ, լուսանկարներ):

8. Գամբանի կառուցվածքը: Փոս գետնի մեջ—խորութեան, յերկարութեան, լայնութեան, ձևը: Խոտոչ ունեցող փոս—տատիճաններ, խոտոչի կառուցվածքը, չափերը, ձևը:

Ստորերկրյա խուց - չափերը, անցքի, մուտքի և խուցի ձևը:

9. Փորեկու տեխնիկան—քանդելու կամ փորելու հեռքերը գամբանի պատերին, նրանց ձևը, մեծութեանը, ուղղութեանը: Պատերի և հատակի մշակումը—հարթված, կլորացրած, սղլտակացրած:

10. Թաղման ժամանակ դրած իրերը: Նրանց տեղավորութեանը գերեզմանի մեջ: Վայրի և ընտանի կենդանիների վտակներ: Ամբողջական կմախքներ, թամբի սարք, ամաններ, զգեստի, զենքի, զարդի մնացորդներ և այլն: Գտնված իրերի քանակը, չափերը, նյութը, ձևը և դործածութեանը: Ի՞նչ վիճակի մեջ են պահպանվել:

Վ. Մեհհիրներ, կրովեխներ յեվ դով եհներ

Մեղալիտիկ (խոշոր քարերից) հուշարձաններին անցնելով՝ պեաք ե ասենք, վոր այդ հուշարձանները չափազանց մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Նրանք գրեթե բոլոր յերկիրներումն են պատահում ե Հայաստանումն ել կան: Մի մասը արդեն ցուցակագրված ե*): Նրանք յերեք տիպի յեն բաժանվում. ա) մենհիրներ, բ) կրովեխներ ե գ) գովմեններ:

Մենհիրները մենափոր կանգնեցրած կամ կոպիտ մշակված սյուներ են, կամ գրեթե անմշակ ցից քարեր: Նրանց նշանակութունը դեռ պարզված չե: Մի քանիսի կարծիքով՝ նրանք կանդնեցրած են ի պատիվ վորեւ աչքի ընկնող հանդուցյալի, կամ նրա սպանած թշնամու, կամ վորպես կապած դաշնագրի հուշարձան, կամ նույնիսկ վորպես զոհաբերության տեղի նշան:

Կրովեխները—գետնի յերեսին ողակաձև դասավորված քարեր են՝ տաշած ե անտաշ, յերբեմն պատահում են կրկնակի ողակներ: Միք յերկրում նրանք հայտնաբերված են շատ տեղերում, մանավանդ Արագածի լանջերին: Ուրիշ յերկիրներում շրջանը կազմված ե լինում յերբեմն մի շարք վիթխարի քարե սեղաններից (նստարաններից)—քարե սյուները դույզ դույզ ծածկված են լինում հորիզոնական քարով Ո տասի նման: Նրանք տեղ տեղ թաղման վայրեր են

*) Տես՝ Աշխարհեզ Քալանթարի «Քարե դարը Հայաստանում» 1920. Յերեան:

յեղեկ սակայն ավելի յաճախ ի հիշատակ հանդուցյալի կանգնեցրած քարեր (թաղումը տեղի ե ունեցել վոչ այդ շրջանի մեջ) ե այդպեղ կատարվել են տոնական ծիսակատարություններ կամ նվիրական պարեր. յերբեմն ել դրանք դատասանի կամ խորհրդակցության ժողովատեղիներ են յեղել*):

Նրանք զանազան դարաշրջաններին են պատկանում, առավելապես բրոնզե դարին: Սովորաբար նրանք դասավորված են լինում խումբ խումբ ե յերբեմն ամբողջ դաշտեր են բռնում: Կրովեխը չբարեք ե շիթեղ համեմատաբար ավելի փոքր քարերի այն ողակների հետ, վորոնցով շրջապատված են լինում դամբանները:

Դովմենները առանձին սեղանանման շենքեր են՝ մեծ մեծ անտաշ քարերից կամ սալերից կառուցված: Հայաստանում նրանք այսպես են կառուցված լինում. վիթխարի քարեր իրարից հաղիվ մետրաչափ հեռավորությամբ կանգնեցրած են լինում իրենց յերկայն կողերի վրա ե վրայից պռակեցրած ե լինում մի ընդհանուր սալ քար: Այդ «անականման» (այբեր) շենքերի նշանակությունը վերջնականապես պարզված չե: Կովկասում ե Հայաստանում նրանք թաղման վայրեր են յեղել:

Սովորաբար մեղալիտիկ հուշարձանների բոլոր յերեք տիպերը հանդիպում են միատեղ ե դասավորված են լինում իրարից վոչ հեռու:

*) Տես Anthropos—1928 № 1—2 Wien, Kol, Heine—Geldern-ի հոդվածը:

1. Մենհիրի, կրամլեխի, գոլմենի քարերի մեծությունը, քանակը, տեսակը, տաշված թե անտաշ լինելը, ձևը, ինչ յեզանակով կանգնեցրած լինելը:

2. Մենհիրի, կրամլեխի, գոլմենի չափերը:

3. Մենհիրի լայն կողմը վճի կողմը դարձրած լինելը: Գոլմենի բերանը վճի կողմ դարձրած լինելը:

3. Կրամլեխի մեջտեղ կան արդյոք առանձին կանգնեցրած քարեր, վճիտեղ և ի՞նչ ձևով:

5. Ձեռն գանձում արդյոք դեռնի յերեսին հնադիտական իրեր, խեցիկներ, մարգու և կենդանիների վոսկորներ, վճիտեղ և ի՞նչ քանակությամբ:

6. Մենհիրը, կրամլեխը, գոլմենը կանգնեցրած են առանձնակի թե իրարից վոչ հեռու. ի՞նչ հեռավորության վրա (Գասավորության պլանը: Լուսանկարներ):

VI. Հիցն քաղաքատեղիներ.

Այլիլի ուշ ժամանակվա մարզո իրանից յետո թողել և ամբողջ քաղաքատեղիներ և բերդեր: Կայաններից նրանց իսկույն կարելի յե գանազանել հենց արտաքին տեսքով: Հին քաղաքատեղիի կամ բերդի վայրում սոխորարար լինում են՝ ավելի կամ պակաս հողով ծածկված՝ ճարտարապետական շենքերի մնացորդներ—պատեր, սյուներ, պարիսպներ: Այլ վայրերում դեռնի յերեսին միշտ կարելի յե գտնել պատահական իրեր: Քաղաքատեղիները (городища) բնորոշվում

են արհեստական ամբողջյուններով—շուրջը յերբևմն յերկշար, նույնիսկ յեռաշար թմբով, պարիսպով կամ խրամատով: Սովորաբար նրանք տեղավորված են լինում բարձր տեղերում, հաճախ յերկու ձորերի մեջ գտնված հրվանդանի վրա:

Հին քաղաքատեղիների և բերդերի հետ կապ ունեն նաև հին ճամփաներ, ջրանցքներ, ծածուկ անցքեր, վոսկորման առուներ, ջրհորներ և այլն: Մոտակայքում կարող են հայտնաբերվել դամբաններ, հանքատեղեր, արհեստանոցներ և այլն:

1. Քաղաքատեղիի ձևը—քառանկյունի, յեռանկյունի, քառակուսի, կլոր, պայտանման և այլն (պլան):

2. Նրա բարձրությունը շրջակայքի (գետի, գաշախի, ձորի հատակի, հովախի) համեմատությամբ:

3. Ներսի բակի տարածությունը քառակուսիներով, նաև ամբողջ քաղաքատեղիի՝ իր թուփերով և խրամատներով:

4. Քաղաքատեղիի բնական ամբողջյունները—գետի կամ ձորի յեզերք, քերձեր, ճահիճներ: Վճի կողմից և ի՞նչ յերկարությամբ են նրանք շրջապատում: Բնական պայմանների ուղտագործման յեղանակները պաշտպանության համար—ամրացումներ արհեստական պատերով, աշտարակներով, լանջերի զիք քանդումով և այլն: (Գծանկարներ, նկարներ, լուսանկարներ):

5. Քաղաքատեղիի արհեստական ամբողջյունները: Թուփեր և խրամատներ: Նրանց յերկարությունը, քանակը, գասավորությունը: Բարձ-

րությունը, լայնությունը, թուձրի ձևը դա-
րագան մասերում: Թուձրի մեջ յեղած ընդհա-
տուձները: Մուռքերն և խրամատների պարա-
նոցները: Յցերի և այլ պատնեշները հետքեր
(պլաններ, դձանկարներ, լուսանկարներ):

6. Թուձրերի կազմությունը—հող, կալի,
թրձած կալի շերտեր, քարաբեկորներ (այդ քա-
րերի մեծությունը, քանակը, դույնը, տեսակը,
ձագումը—վճրակից են բերված, մշակված թե՛
անմշակ): Մոխրի, ածուխի, վոսկորների, կուլ-
տուրական մնացորդների հետքեր:

7. Քարեշար պատեր, պատի հաստությունը,
բարձրությունը, քարերի ձևը, մեծությունը, դա-
սավորումը, շաղախը, ձեփը: Քարի տեսակը (մեր-
ձավոր քարահանքը): Քարերի վրա յեղած խա-
ղերն ու նախշերը (նկարներ, լուսանկարներ):

8. Խրամատներ, նրանց քանակը, դասա-
վորությունը: Նրանց միջև յեղած տարածություն-
ները, անցատեղիները (պլաններ). խրամատների
կառուցվածքը—լայնքը, խորությունը և ասիերի
թեքությունը (հատվածագծեր):

9. Քաղաքատեղիի բակը: Նրա յերկայնքն
ու լայնքը դանագան մասերում. ձևը: Բակի բրու-
նած տարածությունը: Նրա մակերեսը, խորդա-
բորդությունները, թուձրերը, առուները: Փոսերը,
նրանց չափերը, ձևը, խորությունը, քանակը,
դասավորությունը: Նկուղների հետքերը բակում:
Ջրհորի կամ ջրի ավազանի, առուի հետքերը,
չափը, խորությունը, դասավորությունը:

10. Քաղաքատեղում գտնված իրերը—թուձ-
րերի, խրամատների մեջ կամ բակում: Մարդու
և անասունի վոսկորներ, քարի, վոսկորի, կալի,
լրոնդի, երկաթի, ապակի իրեր:

Չգետ, զարդ, զենք, գործիք, ամանեղեն,
դրամներ: Գտնված իրերի նկարագրությունը—
քանակը, չափերը, նյութը, ձևը, արհեստը, նպա-
տակը: (Նկարներ, լուսանկարներ):

11. Չին նկատվում արդյոք հին ճանապարհ-
ների, կամուրջների, ջրհորների, թուձրերի, ար-
հեստական լճերի հետքեր: Նրանց մանրամասն
նկարագրությունը (պլաններ, լուսանկարներ):
Նրանցից վճրոնք մինչև այսօր ել բանուկ են:

VII. Բնակավայրերի մնացորդեր: Գյուղեր.

Հին մետաղի (բրոնզի) դարում պատահում
ենք և առանձին գյուղերի: Քաղաքատեղիներից
և բերդերից նրանք տարբերվում են նրանով, վոր
չունեն պաշտպանողական թուձրեր և խրամատ-
ներ ու միայն մի քանի տասնյակ տներից բաղ-
կացած են լինում: Նախնական կայաններից
տարբերվում են նրանով, վոր նրանց բնակիչ-
ները զբաղվում էին երկաղործությամբ, վոր թե
ձկնորսությամբ, և այդ պատճառով դերադասում
էին դաշտավայրերն ու հողամշակության հա-
մար հարմար սարալանջերը:

Այդ հին գյուղերի հետ չը պետք և շփոթել
ավելի նոր ժամանակի գյուղերը, վորոնք պատ-
մական ժամանակաշրջանում ամայացել են՝ բնակ-

չության այս կամ այն առիթով հեռանալու պատճառով: Հայաստանի անտանները, ձորերն ու դաշտերը լիք են այգւլիսի ավերակ գյուղերով: Նրանց շատ հեշտ և ջուկիկ հին՝ պալեոմետալիկ գյուղերից:

1. Խոչից են կազմված բնակավայրի մնացորդները — պատեր, ցցեր, կամուրջներ, տների, ոջախների ավերակներ, շինարարական նյութերի (աղյուսների, քարերի) կույտեր կամ մշակութի ալլ հետքեր:

2. Հին բնակավայրի բռնած տարածությունը — յերկայնք, լայնքը զանազան ուղղություններով, ձևը, քառակուսի տարածությունը. (պլան)

3. Բնակավայրի մակերևութը — բլուր, լանջ, դաշտ, ձոր... (պլան, լուսանկար)

4. Շենքերի սրահերի, ոջախների, հորերի և մշակութի ալլ մնացորդների դասավորությունը, ճանապարհների, սահմանների, փողոցների, արնտեությանների և ալլն նշանները (պլան):

5. Աղբակույտեր և մոխրանոցներ, նրանց քանակը, դասավորությունը չափերը, ձևը (զժանկարներ, պլան): Նրանց մեջ գտնված իրերը:

6. Գեանափոր բնակարաններ: Բանակը, խմբավորումը — շարքերով, շրջանաձև, խումբ խումբ և ալլն: Գեանափորի յերկայնքը, լայնքը, խորությունը, ձևը: Փայտեղեն մասերի մնացորդներ (պլան, զժանկարներ, լուսանկարներ): Նրանց մեջ գտնված իրերը:

7. Հացահատիկների հորեր: Նրանց թիվը, ու ձևը: Հատակի և պատերի մշակումը: Հացահատիկ մնացորդներ և ալլ գյուտեր:

8. Շենքերի մնացորդները: Նրանց քարե և փայտե մասերը: Չափերը կառուցման տեխնիկան: Նյութի առանձնահատկությունները: Շաղախը: Կտուրի և հատակի նյութը, ձևը, կառուցման մանրամասնությունները: Լուսամուտ: Ոջախ, թոնդեր — կառուցվածքը, նյութը...

9. Սմբողջական շենքերի չափերն ու պլանները: Խոչի համար ելին նշանակված:

10. Գեանի յերեսին գտնված իրերը:

11. Չը կան մոտակայքում կամ հեռու մեջը գերեզմանոցներ, գերեզմաններ և թաղման ալլ նշաններ:

12. Չը կան մոտակայքում քաղաքատեղի, բերդ, նրա հեռավորությունը:

13. Պատմական ժամանակներում ամառացած գյուղերի հետքերը: Նրանց տեղագրությունը: Ընկալարանների ձևը, քանակը, նրանց մասին յեղած տեղական հիշողությունները և գրավոր ցուցումները: Տաղանաքարերի և ալլ արձանագրությունները: Պլանը:

VIII. Բարայրե. ստոյելիցյա աղցե.

Բարայրերը մարբու համար բնակության վայրեր ելին գեո նախապատմական ժամանակներից: Նա բնակվում եր թե բնական և թե արհեստական այրերի մեջ: Վերջը այրերը գործ

և յին անվում, վորպես թաղման վայրեր: Մեր քարայրերն և ստորյերկրյա անցքերը ուսումնասիրված չեն: Նրանցից շատերը այսօր ևլ գյուղացիք ողտազործում են իրենց վոչխարի համար: Կան մինչև այժմ ևլ գավառներ (Չանդեղուր), վորտեղ աղլարնակության մի մասը շարունակում և բնակվել այրերի մեջ:

1. Ի՞նչ յերկրաբանական շերտի մեջ և գանվում քարայրը կամ ստորյերկրյա անցքը: Այլ շերտի քարատեսակը, գույնը, կազմությունը, ամրությունը, բրածոները, ներծծումները: Վերևի և տակի շերտերը (քարատեսակների նմուշները):
2. Մուտքը: Նրա չափերն և ձևը, մուտքի բարձրությունը շրջակա մակերևույթի և քարայրի հատակի համեմատությամբ: Մուտքի քողարկման առանձնահատկությունները—ժայռեր, քարեր, բուսականություն: Մուտքերի քանակը: Յեղքերը:

3. Մուտքը փակելու յեղանակը:

4. Քարայրի կամ անցքի պլանը: Ներսի մանրամասն նկարագրությունը—նրա առանձին մասերի (հատվածագիծ): Դահլիճներն ու առանձին խոռոչները:

5. Պատերի, առաստաղի և հատակի յերեսների փոփոխությունները:

6. Առանձին բացվածքներ: Ծակեր և պատուհաններ փերտում կամ կողքերին, նրանց ձևը և փորելու յեղանակը. ո՞ւր ևն նայում: Ծխի անցքեր, ծխաններ:

7. Այլը կամ անցքը փորելու յեղանակը: Բլունքի և այլ գործիքների հետքերը: Մակերեսը հարթեցնելու նշանները:

8. Պատերի և առաստաղի վորմնաշարությունը: Քարերի տեսակը, չափերը, մշակման յեղանակը: Աղյուսներ, նրանց թրծելու յեղանակը: Վորմնաղբության յեղանակը: Շաղախը:

9. Հատակին և այլ տեղերում գտնվող իրերը:

10. Բնակության հետքերը պատերին ու առաստաղին: Յցիկներ, մեխեր, սղակներ, ճրագի, սջախի տեղեր: Գծեր, խողեր, նկարներ (նախշեր), քանդակներ (նկարներ, լուսանկարներ):

12. Մակազրություններ:

12. Թաղումներ հատակին կամ պատերի մեջ: Վճրտեղ, ի՞նչ բարձրության վրա:

13. Ի՞նչի յին ծառայում այժմ այլ այրերն ու անցքերը:

IX. Վիճապներ

Հայաստանում (որինակ՝ Գեղամա լեռների մոտ)՝ անհա «վիշապ» կոչված հուշարձանները: Իրանք անագին քարե սյուներ են՝ կողերը մի քիչ հարթեցրած և ձուկ հիշեցնող ձևի: Յնեթաղբում են թե դրանք մի ժամանակ Հայաստանում գոյություն ունեցող ջրի պաշտաման նյութական մնացորդներ են:

1. Վճրտեղ և գտնվում վիշապ քարը,—գետի, լճի, առուի մոտ կամ այլ տեղ: Մի քար

և թԵ մի խումբ քարեր: Ի՞նչ կա մոտա-
կայքում:

2. Վիշապի բարձրությունը, արամազիձը,
ձևը:

3. Վաղճւց և վիշապը այդտեղ կանգնած թե
փոխադրված և մի այլ տեղից, վո՞րտեղից, ո՞ւմ
ձևաքով և յե՞րբ:

4. Վճր կողմն են ուղղված նրա մակերես-
ները: Վճր յերեսին կան փորագրություններ:

5. Ի՞նչ քարատեսակից և շինված վիշապը:
Վճրտեղ և նման քարատեսակի քարահանքը:

6. Ի՞նչ յեղանակով և քարը տաշված: Չեն
նկատվում արդյո՞ք տաշող գործիքների հետ-
քերբ:

7. Մանրամասն նկարագրություն վիշապի
վրա յեղած պատկերները: Նրանց դասավորու-
թյունը: Չըկան արդյո՞ք ներկի հետքեր (լուսա-
ներկաք, նկաք):

8. Ի՞նչ բոցատարություն ևն տալիս տեղա-
ցիք այդ «վիշապներին»:

X. Փորագրված նախեր, նկարներ, գրու- թյուններ.

Ժայռերի վրա պատահում են զանազան
փորագրված նախշեր, նկարներ, տառեր: Մեզ
մոտ գտնված են բազմաթիվ «իծագիր»-ներ,
որինակ՝ Արագածի և Սևանա շրջաններում:
Դրանք ավելի հին են, քան թե այն սեպածե

արձանագրությունները, վոր Վանի թագավոր-
ները թողել են մասամբ նույնպես ժայռերի, մա-
սամբ ել շենքերի մասերի կամ առանձնակի
կանգնած քարերի վրա:

Շատ ավելի նոր են հունական, լատինական
և այլա: հայկական արձանագրությունները: Վեր-
ջիններս թվով շատ շատ են և բազմազան—փո-
րագրված պամբանների, խաչքարերի, պատերի,
ամեն տեսակ հուշարձանների վրա, հաճախակի
վորեև գարգաքանդակի հետ: Մանավանդ ճախ
նախշեր ու նկարներ ունեն խաչքարերը, վորանք
հայկական գեղարվեստի պատմության մեջ բնույթ
են կարևոր տեղ: Բնորոշ նկարներ պատահում են
մանավանդ գերեզմանաքարերի վրա՝ աշխատան-
քի գործիքներով և կենցաղային տեսարաններով
—վորս, խնջույք, հանդես: Այս նկարները ահա-
զին և արժեքավոր նյութեր են պարունակում
փառաց անհայտացած կյանքը հասկանալու հա-
մար, մանավանդ յեթե հեաները անձանագրու-
թյուններ ել են լինում:

1. Ի՞նչ քարի հուշարձանի (պատի, ժայռի,
առանձնացած քարի, գերեզմանաքարի...) վրա
և գտնվում նկարը կամ գրությունը, նրա վճր
կողմին և վճրտեղ:

2. Քարի բնույթը, վորի վրա նկարն և կամ
գրությունը: Նրա քարատեսակը:

3. Մակերեսի բնույթը—ուղից, հարթ, վո-
ղորկ, չըկմն զուգահեռ գծեր:

4. Նկարի կամ գրության բռնած տարածությունը և այլ տարածության ձևը: Ամեն մի մասի չափերը:

5. Վերջափ լավ և պահպանվել նկարը կամ գրությունը.—ամբողջ պարզ ընթեռնելի թե՞ ջնջված, չջոկվող: Վեր մասերն են վնասված:

5. Նկարներն արտանկարումը և գրություններն արտագրումը, նրանց մեջ կամ կողքին պատահող մանրամասնություններով (զարդաքանդակներով, շրջանակով, մանրանկարներով և այլն):

7. Քանդակման յեղանակը—խորաքանդակ թե՞ բարձրաքանդակ, թե՞ կորաքանդակ: Ի՞նչ գործիքով և քանդակված, նայելով հետքերին:

8. Մանրամասն նկարագրություն նկարներն—յերկրաչափական, բուսական, կենդանական: Մարդկային պատկերներ — գեմքը, մարմինը: Կենցաղային իրեր—գնեք, զորդ, գործիք, կոսք, կահկարասիք և այլն: Այլ նկարների դասավորությունը և չափերը:

XI. Պատահական գյուտեր: Գանձեր

Պատահական գյուտերի շարքին են պատկանում բոլոր այն հին առանձնակի իրերը, վոր պատահաբար յերևան են գալիս արտ վարելիս, հեղեղից յետո, հողի աշխատանքի ժամանակ և այլ հանգամանքներում և հաճախ գետնի նի յերևաին են թափթփված լինում մնալով աննկատելի: Գանձերը լինում են յերկու տեսակի—

իրերի, գանձեր և գրամների գանձեր: Նրանք նույնպես պատահաբար են հայտնաբերվում, մեծ մասամբ հողի աշխատանքների ժամանակ: Յերբն նրանք կավի կամ մետաղի ամանի կամ սնդուկի մեջ են լինում պարփակված: Գանձերը թողված մնացել են կամ փախուստի մատնված բնակիչներից, կամ վաճառականներից:

1. Գյուտի ժամանակը (տարեթիվը, ամիսն ու օրը), տեղը և գտնողի անունը, հոր անունը և ազգանունը ու մանրամասն հասցեն, սոցիալական գրությունը:

2. Ի՞նչ պարագաների մեջ և կատարվել գյուտը—հողը վարելիս, առու, փոս, հոր փորելիս, տուն կառուցանելիս կամ գետի վարարման ժամանակ և այլն:

3. Գյուտի առանձին իրերի ցուցակագրությունը և ամեն մեկի մանրամասն նկարագրությունը (թիվը, չափերը, կշիռը, նյութը, մշակման առանձնահատկությունները, գույնը, ձևը, զարդերը, նշանակությունը):

4. Դրամների նկարագրությունը, քանակը, մետաղը, կշիռը, վրայի նկարները, մակագրությունները: (Դրոշմվածքներ մեղրամոմի, գծուսի, թղթի վրա: Արտանկարներ, լուսանկարներ):

5. Ի՞նչպես էյին գրված—միասին թե՞ առանձին առանձին, և իրարից ի՞նչ հեռավորության վրա. ամանի մեջ (ի՞նչ տեսակ ամանի մեջ), փոսի մեջ (փոսի մեծությունը, ձևը), շորի մեջ փաթաթված թե՞ ուղիղ հողի մեջ:

6. Արդյո՞ք գլխաւ միջոցին չեն հասնաւ-
բերված թաղման նշաններ մարդու, կենդանու
կմախք, մոխիր, ածուխ, աչքված վառար կտոր-
ներ և այլն:

7. Չըկան արդյո՞ք ցուցմունքներ թե ինչ
պարագաները մեջ են ընկել հողի մեջ այլ իրերը
— թաղման միջոցին, պատերազմից, զժրախտ
գեպքից կամ այլ պատահարից յետո, թե՞ թաղ-
ցըրված են յեղի վորպես գանձ:

8. Ո՞ւմ մոտ և վո՞րտեղ են պահվում դաբը-
ված իրերը: (Նրա ճիշտ անունն ու ազգանունը
և հասցեն):

XII. Մոնումենտալ հուշարձաններ

Հնագիտական ուսումնասիրութեան առան-
ձին խումբ են կազմում պատմական դանազան
ժամանակներից մնացած շէնքերը, շինութեան-
ները և այլ ճարտարապետական գործերը, սկսած
տաճարներից, բերդերից, պալատներից և վեր-
ջացրած տապանաքարերի տարբեր տեսակներով՝
կոթողներով, խաչ-քարերով, քարե վոջխարնե-
րով, ձիերով, և այլն:

Նրանցից մի մասը, համեմատաբար ավելի
յետին ժամանակաշրջանին պատկանելով՝ յեր-
բեմն դեռ մինչև այսօր ել ծառայում են մարդ-
կային պետքերին (որինակ՝ յեկեղեցիները, կա-
մուրջները, ջրանցքները և այլն): Նրանց գեղա-
գիտական ձևերը մեծ նշանակութեան ունեն

տեղական նոր ճարտարապետութեան վորսնում-
ները համար:

1. Շէնքը ի՞նչ նպատակով և կառուցված:
Յեկեղեցի, վանք, մատուռ, մզկիթ, աղս-
թատուն:

Ամբոց, բերդ, աշտարակ, դարպաս, առան-
ձին պատեր, թմբեր:

Բաղանիք, ջաղաց, քարվանատուն, դպրոց,
խանութ...:

Պալատ, մասնավոր տուն և նրա անտեսա-
կան շէնքեր (զոմ, ախոս, մարագ, մառան,
հնձան...):

Արձաններ, անդրիններ:

Տապանաքարեր— կոթող, խաչքար, վոջխար,
ձի և այլն:

Առանձին քարեր: Մահամանաքարեր: Մա-
տաղի քարեր:

2. Շէնքի հատակագիծը: Պատերի, հատա-
կի, առաստաղի, ծածկի, դռների կառուցողական
մանրամասնութեանները (քանակը, նյութը,
ձևը, չափերը):

4. Շէնքի արտաքին և ներքին տեսքը գա-
նազան կողմերից (նկարներ, լուսանկարներ):

5. կառուցման տեխնիկան (վորմնադրու-
թեան, թաղակապութեան, սվաղի... յեղանակ-
ները):

6. Շէնքի վրա յեղած նկարները, զարդա-
նկարները, վորմնանկարները: Նրանց բովանդա-
կութեանը, չափերը, ներկերը, գծելու յեղանակը
և այլ մանրամասնութեաններ:

7. Չէն նկատվում նաև հավելումներ և նորոգութեան հետքեր:

8. Շենքի շուրջը թափթփած քարեր և առանձին մասեր:

9. Դեպի շենքը առնույ հին ճանապարհի հետքերը:

10. Ի՞նչ նպատակի յի գործածվում այժմ շենքը:

11. Չը կան արդյոք շրջակայքում այդ շենքերի քարերի գործածութեան հետքեր:

XIII. Պատասխան հասուկ վայրեր

Զոհարերութեան և առհասարակ կրօնական ծիսակատարութեան համար բոլոր ժողովուրդները ընտրում ելին հատուկ վայրեր. նրանք սովորաբար կամ բարձր կամ ծածուկ տեղերում ելին: Զոհարերութեան վայրերում կուտակված են լինում մոխիր, կենդանիների վոսկորներ և կենցաղային իրեր, յերբեմն հատկապես պաշտաման համար պատրաստված (փոքրիկ պուլիկներ, կենդանիների արձաններ, մարդու անդամների ընդորինակութուններ, կուռքեր և այլն): Պատահում են և «թասավոր», կամ զոհարերութեան քարեր, փորոնց վրա՝ յերբեմն անկարգ ու անսխտեմ, յերբեմն ել յերկաշափական ֆիզուրայի նման՝ դասավորված են լինում փոսիկներ, կանոնավոր կլոր՝ հինգ և պակաս սանալիմար արամագիծ ունեցող փոսիկներ: Կան գյուղեր, փորտեղ բնակիչները «թասավոր» քարերը մին-

չև այսոր ել պաշտում են՝ փորագրելով նրանց վրա խաչեր:

Շատ են տարածված մարդու (այլ մարդու՝ ֆալոս՝ կամ կին մարդու) սեռային անդամի նրման՝ քարից կամ կավից շինած իրեր. դրանք նեռային ուժի պաշտաման վկաներ են:

1. Ի՞նչ վայր և պաշտվում—պուրակ, ծառ, աղբյուր, քար, լեռ, քարայր, դերեզման, ..

2. Կան արդեոք այդ վայրում արհեստական շինութեաններ, ի՞նչ ձևով և ի՞նչ նյութից:

3. Յեթե կան թասավոր քարեր՝ ի՞նչ ձևով են դասավորված վրայի փոսիկները:

4. Ֆալոսի մեծութունը, նյութը. առանձին և թե՛ մի այլ հուշարձանին ամբարցրած:

5. Վ՞որ որերն են այցելում այժմ այդ վայրերը ուխտավորները և ի՞նչ առիթներով: Ի՞նչ տեսակ սնահավատական ծեսեր են կատարվում:

XIV. Հին կենցաղի իրեր

Այս իրերը ամբողջապես պատմական ժամանակին են պատկանում: Նրանք յեկեղեցում, պալատում, մասնավոր տներում զինվորական ծառայութեան, արհեստի մեջ, խրախճանքների ժամանակ և այլ հայդամանքներում գործածված իրեր են:

Այդ իրերից շատերը մինչև այսօր ել գործ են անվում: Չը պետք է ամենը հավաքել և փոխադրել թանգարան:

1. Յեկեղեցական զանգեր, գրքակալներ, աթոռներ: Ավագաններ: Ձաներ, կանթեղներ, մոմակալներ: Սաչեր, պատարաղի և այլ ծխակատարութեանց ժամանակ գործածվող պարագաներ. բուրվառներ: Յեկեղեցական զգեստներ: Պատկերներ: Յեկեղեցական գրքերի զարդեր:

2. Ձենք ու ջրահ: Հրագնի հին տեսակները:

3. Ամաններ՝ քարե, փայտե, կավե, պղնձե, յերկաթե...

5. Չգեստներ:

6. Չարդեր—ականջի ողեր, ճականոց, մանյակ, ասպրանջան, մատանի, գտախ, կոճակ, հայելի, քրոցներ, սանր:

7. Արհեստի գործիքներ:

8. Յերածշտական գործիքներ:

9. Այժմ այդ իրերը գործ են անվում արգո՞յք և վո՞ր գեպք՞ բուժմ:

Ամեն իրի մասին—վո՞րտեղ և գտնված, ո՞ւմ ձեռքով և յե՞րբ, վո՞րտեղ և այժմ: Չափերը, ձևը, նյութը, զարդարվածքը—և առհասարակ մանրամասն նկարագրութեան (գծանկար, նկար, լուսանկար):

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԳԵՏՆԻ ՅԵՐԵՍԻՆ ԳՏՆՎԱԾ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ
ՄՆԱՅՈՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՀԱՄԱՐ.

Ա. Կայաններ

1. Գետերի, ձորերի եզրերին, կամ ջրբաժաններին բացվող կայանները պետք և ուսումնասիրել թե յերկրաբանական և թե հնագիտական կողմից:

2. Նյութը հավաքվում և գլխավորապես լանջերին, վորտեղ կուլտուրական շերտերի մեջ տեղավորված իրերը արդեն բացվել են ջրի հոսանքից կամ հողի հետ միասին թափվել են վար և գտնվում են գետնի յերեսին: Յերբեմն նրանք պատահում են լանջի հատակին, դիք յեզրի տակ, ուր նրանց տարել են գարնան հալքի կամ անձրևի ջրերը:

3. Այն գեպքերում, յերբ կուլտուրական շերտերը մի քանի յին, հարկավոր և զանազանել այն իրերը, վորոնք գեո մնում են իրենց սկզբնական տեղում, իրենց շերտերում, այն իրերից, վորոնք դուրս են թափվել շերտերից և իրար հետ խառն ընկած են լանջերին կամ նրանց ստորոտում:

4. Առաջինները պետք է ամեն մի շերտից հավաքել առանձին առանձին և ճիշտ նշանակել թե վոր շերտից են ծագում:

Իսկ թավովածքի մեջ գտնված իրերը կարելի չէ հավաքել միասին խառը. նրանց ուսումնասիրում են համեմատելով այն իրերի հետ, վորոնք տեղավորված էյին անխախտ շերտերի մեջ:

5. Շատ ցանկալի չէ, իսկ յերբ մի քանի կուլտուրական շերտեր են,—պահանջվում է հավաքածուին կցել բոլոր շերտերի հողի նմուշներ, տեղի գծանկարը՝ բոլոր շերտերի նշումով:

6. Այն դեպքում, յերբ լանջերին բացված են լինում բրածո կենդանիների (մամուտի), որնգլեղջուրի և այլն) վտակորները մոխրի, ածուխի, կայծակոբի գործիքների հետ միասին, պետք է,—առանց կողմնակի մարդկանց ուշադրությունը գրավելու, վորպեսզի գյուտը կողոպտման չենթարկվի,—հրավիրել մասնագետների և առանց նրանց ինքնագլուխ լուռինչ չանել:

Այս տեսակի (հին քարե դարի կուլտուրայի) գյուտերը ունեն մեծ գիտական նշանակություն և նրանց ուսումնասիրությունը պահանջում է մեծ գիտություն և յերբեմն միքանի մասնագետ գիտականների աշխատակցություն:

Բ. Գեոգրաֆիկներ, քաղման վայրեր, մոխրակույտեր

1. Արտը վարելու ժամանակ հաճախ արտը գետնի յերեսն է հանում հին հին իրեր: Մեծ

մասամբ գրանք գերեզմանների թումերից գուրս եկած իրեր են լինում:

2. Առավել մեծ նշանակություն ունեն ստատիկ հերկված կամ գետնին բուրրովին հավասարեցրած գերեզմանները: Այդպիսի տեղեր լավ են նշմարվում մասնավանդ արևի շատ թեք շողերով՝ արշալույսին և վերջալույսին:

3. Մյուս՝ յերբեմն միակ նշանը հերկված գերեզմանոցի՝ գետնի գույնն է լինում: Հերկված սև հողի վրա. գերեզմանները աչքի չեն զարնում դեղնավուն կավի բծերով, մոխրակույտերը սպիտակավուն, մոխրագույն բծերով, այլ դեպքերում՝ հողի մի այլ գույնով:

4. Այդպիսի վայրերը քիչ թե շատ ծածկված են լինում կուլտուրական զանազան մնացորդներով—մարդու կամ կենդանու վտակորներով, ածուխով, խեցիներով, քարե, յերբեմն մետաղե իրերի բեկորներով, ապակեղենով և այլն:

5. Տեղը պետք է գննել սխտեմատիկ կերպով: Դրա համար պետք է անց ու դարձ անել այս ու այն կողմը նրա ամբողջ մակերեսով, մոտավորապես մեկ մեկ մետր հեռավորությամբ: Յերբեմն պետք է լինում կրկին անցնել, բայց արդեն նախորդ ուղղությանը ուղղահայաց ուղղությամբ: Նպատակահարմար է մի ձևով քարշտալ յետևից շղթա, անցած տեղերին հետք թողնելու համար:

6. Պետք է հավաքել բոլոր իրերը, թե ողջ պահպանվածները և թե կտոր կտոր յեղածներն ու փշրվածները, նաև այն քարերը, վոր այլ

տեղերից են բերված այդտեղ: Պետք է նույնպես վերցնել բոլոր այն իրերը, վորոնք վորև է բանով աչքի են ընկնում, բոլոր անհասկանալի, անբացատրելի իրերն և կտորները:

Այս մանրամասն հավաքածուները՝ հիշատակարանի մեջ ճիշտ գրանցրած մատնանշումներով շատ արժեքավոր նյութ են գիտական մշակման համար:

7. Վարելահողերում հնագիտական իրեր հավաքելու լավագույն ժամանակն է աշունը՝ իսկույն վարից յետո, կամ վաղ գարունը՝ ձյան հալքից յետո անմիջապես:

Գ. Քաղաքատեղիներ յեվ գյուղեր

1. Քաղաքատեղիներում և գյուղերում նյութերի ամենամեծ, յերբեմն անազին քանակությունը պատահում է գետերի և առուների վրացված տեղերում, Այստեղ նկատվում է բոլոր քաղաքակրթական խավերի հաջորդականությունը՝ համեմատ խավերի դասավորությանը:

2. Այնտեղ, վորտեղ հողը հերկվում է, գետնի յերեսին հեշտ է գտնել բազմաթիվ հնագիտական մնացորդներ, վոր պետք է հավաքել և ուսումնասիրել նախորդ Բ. գլ. ցուցմունքների համար:

3. Այնտեղ, վորտեղ հողը չի հերկվում, մանավանդ յերբ ծածկված է լինում անտառով, մնացորդները քանակությունը անհամեմատ քիչ է լինում: Անհրաժեշտ է ուշի ուշով գննել ամ.

բոլջ մակերեսը, աչքից բաց չը թողնելով ջրերի հոսած տեղերը, փոսերը, լանջերը, հորերը, առուները, ձորակները և վերջապես գետնի մեջ ապրող կենդանիների բներից դուրս հանած հողերը: Այդ տեղերում հաճախ գտնվում են կուլտուրական իրեր:

4. Մանավանդ մանրամասն պետք է գննել քաղաքատեղիի թումբերը, նրանց լանջերն ու թեքվածքները, վորտեղ կարելի յէ հավաքել ջրի վրացած և դուրս ցցված իրեր, ինչպես և կարելի յէ պարզել այդ թումբերի կառուցման յեղանակը:

5. Թե ինչպես պետք է հավաքել իրերը, տես վերև Բ. գլխի մեջ տրված ցուցմունքները: Թումբերից պետք է վերցնել վորմնագրության նմուշներ, թրծած աղյուսներ, ածուխներ և այլն, այն ամենը, ինչ վոր բնորոշում է թմբի կառուցման յեղանակը:

6. Քաղաքատեղիի և հին բնակավայրերի ուսումնասիրության լավագույն ժամանակամիջոցը—գարունն է, ձյան հալքից անմիջապես յետո, իսկ վորտեղ վոր գետինը վարում են, — իսկույն վարից յետո:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

I. ՄԱՐԵՐՈՒՏԱՅԻՆ ԻՆՏԱՊՈՆՍԻՅԱՆՆԵՐ

1. Հնագիտական իրեր շատ են տարածված: Այնտեղ, վորտեղ նրանք դեռ հայտնաբերված չեն, նրանք յերևան են դալիս միայն ամբողջ տեղի մանրամասն հետազոտությունից յետո: Ուստի չափազանց անհրաժեշտ է յուրաքանչյուր վայր յենթարկել մարշրուտային զըննությանը հնագիտական տեսակետից:

2. Նախնական մարշրուտը կազմելիս պետք է ոգտվել ամենամեծ մասշտաբի քարտեզներով, զինվորակա-տոպոգրաֆիական գծնե հինգ վերստանոց քարտեզով: Պետք է տեղն ու տեղը քըննել և ցուցակազրել քարտեզի վրա նշանակված բոլոր գերեզմանները, ավանները, հրապարակները, թուժքերը, ամբությունները, ավերակները, նույնպես բոլոր այն շարժվող սոթանքները, վորտեղ սպասելի յեն հին կայաններ կամ արհեստանոցներ:

3. Անկախ քարտեզից պետք է մանրազընին քննել ձեր բնակավայրի ամբողջ շրջակայքը, մեկ մեկ հետազոտելով ա) ձորերի և գետերի լանջերը, փոսերը, խորդ ու բորդ տեղերը, վորտեղ կարող են պատահել գետնի միջից

վացված իրեր. բ) բոլոր բլրակներն ու գետնի մակերեսի անհարթությունները, գ) արհեստական փոսերը, առուները, ինչպես և դուրս թափված հողակույտերը, դ) բոլոր ավազոտ տարածությունները, վորտեղ կարող են գտնվել ուրիշ տեղերից փոխադրված իրեր:

4. Պետք է հարց ու փորձ անել տեղացի բնակիչներին բոլոր հնագիտական իրերի գտընված վայրերի մասին և տեղն ու տեղը ստուգել նրանց ասածները: Հաճախ նրանց ցուցմունքները լինում են անհիմն կամ չափազանցրած, սակայն և մի մասը ճշտվում է:

II. ԲԱՐՏԵԳՆԵՐԻԿ ՈԳՏՎԵԼԸ

1. Մի տեղ պլանաչափ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ոգտվել քարտեզներից:

2. Խ. Հայաստանի համար կարելի յե ձեռք բերել Կովկասի Զինվորական Շտաբի կազմած քարտեզներից 10-վերստանոցը, սակայն ավելի հանձնարարելի յե 5-վերստանոցը, վորը կարելի յե գնել առանձին առանձին թերթերով, նայելով թե վոր վայրն էք ուսումնասիրության յենթարկում: Մեկ վերստանոցը կազմում է զինվորական գաղտնիք և վաճառքի չի հանվում:

III. ԵՖԱԿՈՒՐՍԻՈՆ ՍԱՐԲԱՎՈՐՈՒՄ

1. Եքսկուրսիաների ժամանակ պետք է ունենալ քիչ թե շատ մեծ պարկ կամ պայուսակ,

մի քանի գրպաններով, այդ պարկը կամ պոչուսակը պիտի հարմար լինի շալակելու կամ ուսին կրելու համար:

2. Այդ պարկի կամ պոչուսակի մեջ պետք է ունենալ.—

ա) Կողմնացույց. ավելի նպատակահարմար է այնպիսինը, վորը զիտպար, կամ տատիճանացույց ունի:

բ) Ռուկետ—տասնորդական չափերով, մանր իրեր չափելու համար—1,5 մետրանոց ժապավեն.

գ) Յուշատետր. հանձնարարելի է վոչ շատ փոքր զիքք ունեցող, որինակ՝ $\frac{1}{4}$ գրելու թերթի չափով, ամուր՝ սովորաթղթի կամ կտավե կազմով, ցանցազծված, վորով գյուրանում է հատակագիծները դժուրեք և նկարումը:

դ) Դանակ՝ սովորաբար մեծ և ծալովի, դետնի միջից այն իրերը կամ վոսկորները աղատելու, վորոնք մասամբ դուրս ցցված են լինում՝ որինակ՝ լանջերին, ջրի լվացած տեղերում, կամ արմատներ, ցողուններ և այլն կտրելու համար.

ե) Բահիկ. լավագույնն է՝ գոտուց կախովի զինվորական—սակրավորների բահիկը կամ սվաղողների գործածած մեծ մալան:

զ) Թուղթ՝ գտած իրերը փաթաթելու համար, (հին լրագիր, գրացուցակ, հաշիվ և այլն): Ետիկեաների համար վերցնել գունավոր մաքուր թուղթ, կապելու համար՝ բարակ պարան:

ը) Տուփեր՝ փշովող և կոտրվող իրերի համար: Լայլ է ունենալ յերկու յերեք հասթիթեղե

տուփեր շատ մանր, խնչպես և ավելի արժեքավոր և հազվագյուտ իրերի համար:

ը) Մի սրվակ գունմի (սոսինձ) վրձինով:

թ) Եկլիմետր—անկյունաչափ լանջերի թեքվածքը չափելու համար:

ժ) Առանձնապես ցանկալի յե ունենալ նաև լուսանկարչական սպարառ:

III. Չափումներ

1. Այս կամ այն հուշարձանի վստահելի նկարագրության համար անհրաժեշտ է նրան չափել ճիշտ չափերով:

2. Յերբ չըկան ճիշտ չափեր, չափումները կարելի յե կատարել բնական չափերով—քայլերով, ձեռքերով, թիղով, մատներով, միշտ այդ մասնացույց անելով հուշատետրի մեջ: Պետք է տալ վերջը և այդ բնական չափի չափումը ճիշտ չափերով, որինակ՝ մի քայլը, թիղը... վերջան սանտիմետրի յե հավասար:

3. Յեթե անհնարին է չափել կարելի յե տալ համեմատական մեծությունը—գլխի, բուռնցքի, սիսեռի չափ... մեծություն:

4. Յեթե չափում են մի թումը կամ բլրակ նրա գազաթի վրայով, պետք է նշել այդ, որինակ՝ «12 մետր գազաթի վրայով»:

5. Չափելու միջոցին պետք է վերցնել յերեք մեծությունները—բարձրությունը, լայնությունը և յերկարությունը կամ բարձրությունը, յերկարությունը, հաստությունը: Պետք է ճիշտ

գրանցել թե վոր բնական անշարժ կեանք մտախց
ե չափոված—սրինակ՝ մուտքի աջ կողմում այս ինչ
քարի մտախց... կամ յեթե մի բլուր ե չափոված՝
լստ աշխարհի կողմերի:

V. Պլանների յեվ հասկացածների գծումը

1. Քաղաքատեղիները, բնակավայրերը, կա-
յանները, գերեզմանատների սլանները ու հատ-
վածագծերը ճիշտ գծելու համար պետք ե գիմել
հատուկ գրականությանը: Յեթե անկարելի յե ճիշտ
գծումը տալ, պետք ե գծել, ինչպես աչքիդ յե-
րևում ե, ե այդ նշել նկարագրության մեջ:

VI. Լուսանկարում յեվ ձեռանկարում:

1. Լուսանկարները պետք ե լինեն հնարա-
վոր չափով մեծ, համենայն դեպս վոչ պակաս
9×12 սանտ.: Մանրամասնությունները նկար-
վում են մտախցից ավելի մեծ չափերով:

2. Առանձնապես կարևոր իրերը պետք ե
լուսանկարել զանազան կողմերից՝ լիակատար
գողափար տալու համար: Մանր իրերը նկա-
րում են բնական մեծությամբ. մանրամասնու-
թյունները պարզ են դուրս գալիս թեք լու-
սավորությամբ:

3. Լուսանկարելիս պետք ե ցուցմունքներ
տալ մասշտաբի մասին: Մեծ շենք նկարելիս՝
կողքին կանգնեցնել մարդ, լանջերին՝ փայտե ձող

մետրերի բաժանված, մանր իրի կողքին՝ միլի-
մետրական քանոն կամ սանտիմետրանոց ժա-
պավեն:

4. Յուրաքանչյուր նեպատիվի վրա պետք ե
դնդաանգով քերել կամ տուշով մակագրել վոչ
կարևոր ծայրին ճիշտ ցուցմունքներ հուշարձանի
տեղի, կատեգորիայի ե նկարման ժամանակի
մասին: Նույնը, բայց ավելի մանրամասնու-
թյուններով պետք ե գրել նաև արտատպվածքի
վրա—ավելացնելով հետադրողի անունը:

5. Յեթե անհնարին ե լուսանկարել, կարելի
յե բավականանալ ձեռանկարով, աչքի առջ
ուեննալով միենույն ցուցմունքները:

6. Ինչքան շատ նկարագրական մանրա-
մասնություններ կցված լինեն լուսանկարներին
ե ձեռանկարներին, այնքան լավ:

VII. Եսամկամ յեվ մուլյաժ

1. Լենում են հնազիտական իրեր, վորոն-
ցից կարելի յե ե արժ ե ընդորինակություն
ուեննալ ետամպածի ե մուլյաժի ոգնությամբ:

2. Փայտի, քարի վրա գրած մի արձա-
նազրությունից կամ զարդանկարից ետամպ
առնելու համար—նախ լավ լվանում են այդ
փորագրած յերեսը ջրով, թաց մակերեսի վրա
դնում են շոսլայած, (գերադասելի յե գտելու հա-
մար գործածվող) թղթի լավ թրջված թերթ ե
ուշի ուշով սեղմ տապում են թաց կոշտ խոզա-
նակով, մինչև վոր թուղթը մտնի բոլոր խորու-

բորդությունները մեջ: Այնուհետև մեկը մյուսի վրա փակցնում են նոր և նոր թերթեր, միշտ ամեն անգամ նախ լավ թրջելով մի գույլի մեջ և լավ տապելով: Յերբ թուղթը այլև չի պատալում և ամբողջովին ծածկում է քարը (առանց ծակոտիկների), կարելի չէ կրկին մի քանի թերթ փակցնել: Լավ չորանալուց յետո մեծ զգուշությամբ պոկում են: Ապա կարելի չէ եստամպի երեսը ծածկել սպիտակ լոքով կամ յեփած ոսլայով: Եստամպը կարելի չէ լայն ոլորել (յեթե հնարավորություն չըկա բաց փոխադրելու) և պարփակել ստվարաթղթի ամուր գլանի մեջ: Կարելի չէ լինում յերբեմն ավելի փոքրերը պահել լայն պապկայի մեջ:

3. Քարի, սկզբի, փայտի, կավի, մետաղի վրա փորագրված գրերից և քանդակներից կարելի չէ և այլ յեղանակով ստանալ ընդորինակություն: Վրան փուում են բարակ (որինակ՝ ծխախոտի) թուղթ և՛ ձեռքով անշարժ պահելով՝ վերևից՝ մատիտով ծածկում խիտ խաղերով: միշտ միևնոյն ուղղությամբ Մանր իրերը և գրամները կարելի չէ փաթաթել թղթի մեջ և ապա դժավորել: Այս շատ կոպիտ յեղանակը միաժամանակ և ամենազգուրինն չէ:

4. Ավելի լավ է մանր իրերից, գրամներից և այլն կաղապարներ առնել փափուկ նյութի վրա—մեղրամոմի, գժուսի կամ պլաստիլինի վրա:

5. Լավազույն ընդորինակությունը տալիս չէ գիպսը, վորի նոսր լուծույթը ածում են յուղով կամ վազելինով ծածկված մակերևույթի

վրա, վորից կամենում են ընդորինակել: Այդ կաղապարի ողնությամբ ձուլում են նաև զիպսե ճիշտ և համապատասխան մուլյաժներ, այսինքն՝ իրերի քանդակ ընդորինակություններ:

6. Գյուրաբեկ իրերից ընդորինակություններ և մուլյաժներ վերցնելիս պետք է լինել շատ զգուշ: Փխրուն իրերից ավելի լավ է բոլորովին ընդորինակություն չը վերցնել: Պետք է շատ զգուշ վարվել այն մետաղե, մանավանդ բրոնզե իրերի հետ, վորոնց վրա գոյացել է փառ, բարակ, «աղնիվ» ժանգ (պասինա):

VIII ԵՏԻԿԵՏԱԳՈՒՄ ԵՎ ԳԱՐԱՄՈՒՄ

1. Թանգարանի համար վերցրած իրերը տեղնուտեղը փաթաթում են թղթի մեջ—խեցիները՝ ամեն մեկը առանձին առանձին. կտորվող իրերը՝ փափուկ թղթի կամ բամբակի, կամ բրդի, կամ լաթի մեջ, և ապա դարսում են ամուր տուփի մեջ: Մանր հետաքրքրական իրերը՝ թիթեղի տուփի մեջ:

2. Անհրաժեշտ է տեղն ու տեղը գրել ետիկետներ, վորոնց վրա պիտի նշանակված լինեն գյուտի տեղը, հուշարձանի տեսակը, գյուտի հանգամանքները և թվականը: Որինակ:

Ե լ ա ու .
 Կալատեղ: Արևելյան հոր Ա՝ 1.
 Յե. Լալայան:
 10 VIII 927:

Արևալիր.
 Բլբի հարավ-արևել ստորոտ. ճանապարհից 60 մետր հեռու զեպի արևմուտք:
 Հունարեն արձանագրություն:
 Հն. Պահպ. Կոմիտե.
 10-X-927.

Ամենից լավն է ետիկետը գրել հասարակ մատիտով լավ թղթի վրա:

3. Այնուհետև ամբողջ հավաքած նյութը՝ իր ետիկետներով դարսում են պարկի մեջ կամ փաթաթում են թղթի մի մեծ թերթի մեջ: Ամեն կապոցի վրա գրվում է համապատասխան հակերիճ մակագրութուն:

4. Չը պետք է զանազան, թեկուզ և շատ մոտիկ տեղերից վերցրած իրերը դարսել միասին մեկ կապոցի կամ մեկ պարկի մեջ: Չը պետք նյութերը թողնել առանց ետիկետների և հույսը դնել հիշողութեան վրա: Հին թանգարանային նյութերից մի խոշոր մասը կորցրել է իր դիտական արժեքը շնորհիվ այդպիսի անփութութեան:

IX. Արկղավորում յեկ փոխադրություն

1. Հետո տեղ փոխադրելու համար՝ հավաքած իրերից ամեն մեկը փաթաթում են թղթի մեջ առանձին առանձին, ուշի ուշով դարսում են ստվարաթղթե, փայտե կամ թիթեղե տուփերի մեջ, տուփերը յետո տեղավորում են փայտե արկղի մեջ: Հողից նոր հանած թաց իրերը փաթաթելուց առաջ պետք է նախ չորացնել բաց ողում, բայց ոչ արևի տակ:

2. Պետք է բոլոր իրերը տուփի մեջ և բոլոր տուփերը արկղի մեջ այնպես դարսված լինեն, վոր բոլոր պարսպ տեղերը, խորութունները, բաց կողմերը, անկյունները լցված լինեն

փափուկ թղթով, բամբակով, բրդով, փալատով: Ամբողջական անոթները լավ է բարակ պարանով կապել պուռնգի տակով՝ պարանոցի շուրջը, ինչպես և շարավիղներով:

3. Պետք է բոլոր իրերը այնպես դարսված լինեն, վոր վոչ մեկը չը խաղա իր տուփի մեջ և թուփերն էլ չը խաղան արկղի մեջ:

4. Յերկար և կտրվող, ինչպես և յերկաթե ժանգոտած իրերը, վոսկորե բարակ առարկաները՝ թղթի մեջ՝ փաթաթելուց յետո՝ դնում են փոքրիկ տախտակի կամ հաստ սավարաթղթի՝ համապատասխան ձևի շերտի վրա և նրա վրա լավ կապում թելով և նորից փաթաթում թղթի մեջ:

5. Ամեն տուփի մեջ անպատճառ պիտի դնել յերկու կամ յերեք ետիկետ համապատասխան մակագրութուններով: Նույնպես հակիրճ մակագրութուններ են անվում և տուփի դրսի յերեսին:

6, Վորպես դատարկ տարածութունները լցնող նյութ, մանավանդ անոթների համար, կարելի չէ գործածել սղոցուցք կամ հարդ (դարման):

X. Մաքրում

1. Յեթե եքսկուրսիաների միջոցին հավաքած իրերը պետք է ցուցադրվեն տեղական թանգարանում, հարկավոր է նրանց կարգի բերել:

Մաքրելու յեղանակները կախված են իրերի նյութից և վիճակից: Խիստ դյուրբեկ իրերը չըպետք է բոլորովին մաքրել:

2. Կայծաքարի և քարե իրերը լվանում են ջրի մեջ կոշտ խողանակով: Պետք և ուշի ուշով զգուշ մաքրել յեզրերի մանր առամեները:

3. Վոսկորներն ու վոսկորե իրերը մեծ զգուշությամբ լվանում են ջրի մեջ փափուկ խողանակով կամ բամբակով: Կոտրվող վոսկորները լվանում են հետզհետե, մաս մաս, թողնելով վոր յուրաքանչյուր լվացած մասը չորանա: Դրանից յետո ամբողջ իրը չորացնում են ծծան թղթով և քամու վրա: Շատ փխրուն և դյուրաբեկ վոսկորները պետք և թաթախել շաքրաքի նոսր լուծույթի մեջ կամ հալեցրած սպերմացեոի կիտաճարայի), ծայրանեղ դեպքում ուղղակի ստեարինի (կարթոփիլի) մոմի մեջ:

4. Բրոնզե իրերը՝ ջրով լվանալուց յետո՝ չորացնում են, ապա մաքրում են փափուկ խողանակով մինչև փայլելը: Վոշ մի կերպ չըպետք և հեռացնել կանաչ փառը (պատինա), վորը ծածկում և հալասար շերտով իրը և պաշապանում և իրի բոլոր մանրամասնությունները - այսպես կոչված «աղնիով» ժանգը: Բացի այդ կարելի չե զգուշությամբ մաքրել փոշենման բուսած և կպած ոքսիդը (ОКСИД): Այդ կարելի չե անել մեքենական յեղանակով, զգուշությամբ քերելով այն, ինչ վոր կպել և և փոխում և իրի սկզբնական ձևը և մակերևութը, բուլթ գնդասեղով կամ վոսկորե դանակով: Մասամբ կարելի չե գիմել քիմիական յեղանակին, որինակ՝ լվանալ անուշաարի (НАШАТЫРЬ) սպիրտի նոսր լուծույթի մեջ մի կարճ ժամանակ և ապա լավ սղոզել հասարակ ջրով:

5. Յերկաթը մաքրում են կոշտ խողանակով կամ բուլթ գնդասեղով՝ հնարավոր յեղածի չափ ամբողջ ժանգը հեռացնելու համար, յետո լվանում են մի քանի անգամ տաք ջրով, լավ չորացնում են, ծածկում են շաքրաքով կամ հալեցրած պարաֆինով:

6. Անմաքուր արծաթե իրերը, վորոնց մեջ շատ սղինձ և խառնված լինում (կանաչած), լվանում են անուշաարի սպիրտի նոսր լուծույթով, ապա լավ ողողում են հասարակ ջրով և չորացնում: Այնուհետև փայլ են տալիս փափուկ վրձինով և մահուղով: Սկացած արծաթը չըպետք և մաքրել:

7. Ապակին լվանում են ջրի մեջ կոշտ խողանակով: Յեթե ցանկալի չե բանալ սպակե իրերի սկզբնական գույնը, հարկավոր և լինում մաքրել փոշիացած ապակու բարակ փառը, վորը ապակուն տալիս և սպիտակ, սղոտոր գույն կամ յերբնեռանգություն: Այս բանը պետք և անել շատ մեծ զգուշությամբ, վորովհետև միաժամանակ փոխվում և և մակերեսը և մի քիչ և իրի մեծությունը: Այնուհետև յերբեմն ծածկում են իրը շաքրաքով կամ սղոխուրայով, վորը տալիս և ապակուն սկզբնական փայլն ու գույների խաղը:

8. Կավե իրերը լվանում են ջրի մեջ գանաղան խողանակներով: Փխրուն և դյուրաբեկ յեքիները՝ մեծ զգուշությամբ, վորպեսզի նրանց մակերեսը չըփչանա: Ամբողջական անոթները լվանում են զգուշությամբ մաս մաս, ամեն մասը լավ չորացնելով:

9. Առհասարակ հնազրիտական իրերի մաքրումը պահանջում է մեծ զգուշություն և փորձառություն: Ավելի լավ է, վոր սկսնակներն ու վարժություն հունեցողները խուսա տան այդ աշխատանքից և սպասեն պատեն առիթի, յերբ իրենց գավառը կայցելի մի հմուտ հնազետ:

VI. Մոխսած—հալախում

1. Մի վայրից ծագող իրերը մաքրելուց յետ տեսակավորում են վորեւե նշանին՝ նյութին, նորատակին, չափերին նայելով, ապա կարում են տախտակները վրա:

2. Տախտակները շինում են հաստ սովորաթղթից՝ նախ սովորաբար վրան գորշ, սպիտակավուն թուղթ կամ լաթ փակցնելով: Լավագուցն չափերն են 25×30 կամ 30×35 սանտիմետր:

3. Իրերը վրակարելիս պետք է կըր բիզով նախ սովարաթուղթը ծակել և իրը ամրացնել՝ անցկացնելով այդ ծակերի միջով փափուկ և բարակ թելապատ երկաթե մետաղալար (վոր գործ են անում արհեստական ծաղիկների համար): Պետք է իրերը ամուր սեղմել տախտակներին, յետից մետաղալարերի ծայրերը լավ վոլորելով տափակ-բերան արցանով, բայց շատ զլուռ, իրը չըփչացնելու համար:

4. Տախտակի վրա նշանակվում են գյուտի վայրը, ինչ հուշարձան լինելը, նույնպես գյուտի ժամանակը և գանողի անուն ազգանունը: Վրա կարած իրերը նշում են փոքրիկ ետիկեաներով,

վոր փակցնում են տախտակի վրա: Բոլոր մակազրությունները անում են նոսր սուշով:

5. Զրպետք է միեւնույն տախտակի վրա կարել զանազան տեղերից կամ միեւնույն խմբի զանազան գերեզմաններից հանած իրերը: Յեթե իրերի քանակը քիչ է և պետք է լինում մի քանի վայրերի իրերը մի տախտակի վրա կարել, անհրաժեշտորեն պահանջվում է զանազան վայրերի իրերը իրարից բաժանել պարզորոշ աչքի ընկնող զծեղով: Ամեն մի բաժանմունքում ճիշտ նշվում է գյուտի վայրը:

6. Պոշոր իրերի և ամանների վրա փակցնում են լավ թղթից կտրած փոքր ետիկեաներ, համապատասխան (տես վերը § 4) մակազրություններով: Յերբեմն մակազրությունները անում են հենց իրի վրա՝ նրա վոշ կարեորի մասի վրա:

7. Սեցիները, առանձին մեծ իրերի, ամբողջական անոթների վրա կարելի չէ կախել ամուր թելով սովարաթղթիկներ մակազրություններով: Ստորին ծնոտը կապում են իր գանդին ամուր թելով:

8. Կոտրտած իրերը պետք է կպցնել սոսինձով: Պետք է կտորները միշտ այնպես իրար բերել, վոր նախնական ձևը պահպանվի: Ամանների կտորները կպցնելու համար լավ սոսինձ պատրաստվում է անուշադրի սպիրտի մեջ լուծված պանրից. այս սոսինձը արագ չորանում է: Մեծ անոթներ կպցնելիս հարկավոր է լինում ներսից փակցնել բարակ լաթի կտորներ:

9. Առհասարակ հնագիտական իրերի մաքրումը պահանջում է մեծ զգուշություն և փորձառություն: Ավելի լավ է, վոր սկանակներն ու վարժությունն չունեցողները խուսա տան այդ աշխատանքից և սպասեն պատեհ առիթի, յերբ իրենց գավառը կայցելի մի հմուտ հնագետ:

VI. Մոնիսմ—հավաքում

1. Մի վայրից ծագող իրերը մաքրելուց յետո տեսակավորում են վորեւէ նշանին՝ նյութին, նպատակին, չափերին նայելով, ապա կարում են տախտակների վրա:

2. Տախտակները շինում են հաստ ստվարաթղթից՝ նախ սովորաբար վրան գորշ, սպիտակավուն թուղթ կամ լաթ փակցնելով: Լավագուցն չափերն են 25×30 կամ 30×35 սանտիմետր:

3. Իրերը վրակարելիս պետք է կլոր բիզով նախ ստվարաթուղթը ծակել և իրը ամրացնել՝ անցկացնելով այդ ծակերի միջով փափուկ և բարակ թելապատ երկաթե մետաղալար (վոր գործ են ածում արհեստական ծաղիկների համար): Պետք է իրերը ամուր սեղմել տախտակներին, յետեից մետաղալարերի ծայրերը լավ փոխրելով տափակ-բերան աքցանով, բայց շատ զգուշ, իրը չըփչացնելու համար:

4. Տախտակի վրա նշանակվում են գյուտի վայրը, ինչ հուշարձան լինելը, նույնպես գյուտի ժամանակը և գանդի անունն ազգանունը: Վրա կարած իրերը նշում են փոքրիկ ետիկեաներով,

վոր փակցնում են տախտակի վրա: Բոլոր մակադրությունները անում են նոսր սուշով:

5. Ջրպետք է միևնույն տախտակի վրա կարել զանազան տեղերից կամ միևնույն խմբի զանազան գերեզմաններից հանած իրերը: Յեթե իրերի քանակը քիչ է և պետք է լինում մի քանի վայրերի իրերը մի տախտակի վրա կարել, անհրաժեշտորեն պահանջվում է զանազան վայրերի իրերը իրարից բաժանել պարզորոշ աչքի ընկնող գծերով: Ամեն մի բաժանմունքում ճիշտ նշվում է գյուտի վայրը:

6. Խոշոր իրերի և ամանների վրա փակցնում են լավ թղթից կտրած փոքր ետիկեաներ, համապատասխան (տես վերը § 4) մակագրություններով: Յերբեմն մակագրությունները անում են հենց իրի վրա՝ նրա վոշ կարեօրի մասի վրա:

7. Խեցիների, առանձին մեծ իրերի, ամբողջական անոթների վրա կարելի չէ կախել ամուր թելով ստվարաթղթիկներ մակագրություններով: Ստորին ծնոտը կապում են իր գանդին ամուր թելով:

8. Կոտրտած իրերը պետք է կպցնել սոսինձով: Պետք է կոտրները միշտ ախպես իրար բերել, վոր նախնական ձևը պահպանվի: Ամանների կոտրները կպցնելու համար լավ սոսինձ պատրաստվում է անուշադրի սպիրտի մեջ լուծված պանրից, այս սոսինձը արագ չորանում է: Մեծ անոթներ կպցնելիս հարկավոր է լինում ներսից փակցնել բարակ լաթի կոտրներ:

XII. Հավաքած նյութերի ուսումնասիրութիւնը

1. Արդեն իրերի մոնտաժի միջոցին հարկավոր է լինում մասամբ նրանց դասակարգել: Այնուհետև գալիս են նյութի ցուցակագրութիւնը, նկարագրութիւնը և գիտական հետազոտութիւնը:

2. Ցուցակի մեջ պետք է մուծել ըզրը իրերը, ինչ վոր մանում է թանգարան: Այստեղ գրվում են տախտակների քանակը, գյուտի վայրը, հուշարձանի տեսակը, գտնողի անունը և գյուտի ժամանակը: Ամեն իրի նկարագրութիւն մեջ պիտի նշել նրա ինչի համար լինելը կամ անունը, նյութը, չափը կամ կշիւրը, ձևը, բոլոր առանձնահատկութիւնները:

3. Ժողովածուի նկարագրութիւնը բովանդակում է նույն տեղեկութիւնները, սխտեմի վերածած և ավելի մեծ մանրամասնութիւններով:

4. Վերև բերած ծրագրի պատասխանները — այս կամ այն գյուտի նկարագրութիւնը՝ բոլոր գտնված իրերի առանձին սխտեմատիկ նկարագրութիւն հետ միացած՝ արդեն կարեոր գիտական նյութ է կազմում: Ուսումնասիրութիւնն նաջորդ աստիճանին պետք է լինում վորոշել այն ժամանակաշրջանն ու մշակույթը, վորին գտնված իրերը պատկանում են:

5. Այսպիսի գիտական հետազոտութիւններ պահանջում են արդեն մասնագիտական նա-

խաղատրաստութիւն և գրականութիւն գիտութիւն: Ով վոր կամենում է այդ ուղղութիւնը շարունակել իր ուսումնասիրութիւնը, պիտի գիտի գիտական հիմնարկներին, այն՝ Հնութիւններին Պահպանութիւն Կոմիտեյին, Պետ. թանգարանին, Գիտութիւն և Արվեստի Ինստիտուտին և Պետհամալսարանին:

6. Հնութիւնն հուշարձաններին սպասնացող ամեն վտանգի, ավերման, կորուստի կամ հափշտակման մասին, նույնպես և գտնված գանձերի և հնութիւն ներկայացնող իրերի մասին պետք է անմիջապես հաղորդել Հնութիւնն Պահպանութիւն Կոմիտեյին — Յերեան (անկյուն Արովյան և Ալլահվերդյան փողոցներին):

Հնագիտական ֆարս

Այստեղ բերում ենք Հնութիւններին Պահպանութիւն Կոմիտեյի կազմած «Հնագիտական ֆարսը»: Գովառագեալը հրավիրվում է յուրաքանչյուր հուշարձանի համար պատասխան տալ քարտի հարցերին և ուղարկել Յերեան Կոմիտեյին, վորը ոգտվում է այս յեղանակով իրեն հաղորդած տեղեկութիւններին Հայաստանի բոլոր հնութիւններին ընդհանուր ցուցակագրութիւն և նկարագրութիւն համար, վորին յետ հնարավոր կըլինի կազմել Հանրապետութիւն «Հնագիտական քարտեզը»:

Շրջան: Ինչ հուշարձան. Այցելութիւն ուր յեկ ժամը.

1. Տեղի անունը.— Գավաս, շրջան, պունկա (հին, նոր, ստար):

2. Տեղագրական դիրքը.

3. Հուշարձանի անունը. — Հինը, նորը:

4. Հուշարձանի տեսակը. — Խմբական-հավաքական (ցույց տալ ընդհանուր թիվը) — քաղաք, գյուղ, ամրոց, վանք, յեկեղեցի, հանգստարան, մատուռ և այլն.

Մենավոր՝ արձան, կոթող, խաչարձան, սասանաքար և այլն:

5. Ներկա վիճակը.— Կանգուն, կիտավեր, ավերակ, ամբողջ թե ընկոր, իր բուն տեղում թե տեղահան արված:

6. Նկարագիրը.— Տիպը, վոճը, շինվածանությունը, կառուցման յեղանակը, առանձնահատկությունները, ճարտարապետական բացառիկ հատկանիշներ, կրած փոփոխությունները, նորոգումները և հավելումները (ցույց տալ չափազրուծյան մեջ և վորոշել նրանց ժամանակը), ճարտարապետներ:

7. Շինության ժամանակը.— Շինողը: Շինության և նորոգումների վերաբերյալ արձանագրություններ:

8. Արձանագրությունները. — Նրանց թիվը, տեղը, ժամանակը, բովանդակությունը, վիճակը, դրբերի առանձնահատկությունները, գրիչներ, վարպետների նշանակներ:

9. Քանդակներ.— Թիվը, մոտիվը, տեղը, ժամանակը, վիճակը, առանձնահատկությունները, դժողներ, քարգործներ:

10. Վարմնակարներ.— Դիմանկար թե դարդանկար, աշխարհիկ թե կրոնական, թիվը, ժամանակը, վիճակը, առանձնահատկությունները, նկարիչներ:

11. Հուշարձանի տեսնելիական դուրքունը-դիմացկանություն չափը.— Հատկապես ցույց տալ վաճառված մասերը (ըստ հնարավորության տալ բուսանկարը), պարզել նրանց շտապ ոգնություն հասցնելու պահանջի աստիճանը և մասնանշել վաճառի չեղարացման ձևնարկելի միջոցները:

12. Հուշարձանների, նրանց ընկած մասերի լիվ բեկորների ներկա վիճակը.— Ցույց տալ նրանց պահպանության անհրաժեշտ միջոցները (տեղահան հնադարան, շրջափակ, ծածկ, պահակ և այլն):

13. Պահպանության համար ձեռք առնված միջոցները:

14. Կասարված աշխատանքները. — Նկարագրական, չափազրական, բուսանկարչական, եստամոլային և այլն:

15. Տեղական ավանդություններ հուշարձանի մասին:

16. Մանրություն:

Կազմողի ստորագրությունը:

Դ Ե Կ Ր Ե Տ

Հ. Ս. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄՍՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հանրապետութեան սահմաններում գտնու-
ված ամեն տեսակի հնութեան հուշարձաններ՝
կանգուն, կիսավեր, կամ բոլորովին ավերակ,
առանձին-առանձին թե խմբական ձևով, իրենց
ամբողջ շրջաններովը, ուր պահված են նրանց
հետքերը՝ այսինքն նախկին բնակչութեանց վայ-
րերը—վանքեր, ամբոցներ, քաղաքատեղիներ,
գյուղատեղեր, կամ առանձին կերտվածներ, լի-
նին նրանք գեանի յերեսին թե հողով ծածկված,
իրենց նախկին տեղում թե առաջուց տեղահան
արված—կազմում են պեղական սեփականուրյուն
յեղ պեճ և մնան միանգամայն անաղաթս յեղ
անձեռնմխելի:

2. Հնութեանները պահպանութեանը պե-
տական կարևորագույն խնդիր և, վոր ի կատար
և ածում Լուսավորութեան ժողովրդական Կո-
միտարիատը «Հնութեանները Պահպանութեան Կո-
միտեղի» միջոցով:

3. Հնութեանները ուսումնասիրութեանն
ազատ և բոլոր գիտական կազմակերպութեան-

ները և անհատների համար, սակայն առանց
վորեն փոփոխութեան մտցնելու նրանց արտա-
քին ձևի և դրութեան մեջ:

4. Վոչ վոր իրավունք չունի առանց Հնու-
թեանների Պահպանութեան Կոմիտեղի պաշտ-
ածութեան կատարելու վորեն հնութեան
պեղում, նորոգում, վերականգնում կամ տեղա-
փոխում և արհասարակ հնութեանները հետ կապ
ունեցող վորեն այլ աշխատանք:

5. Աստիճակ արգելվում և հնութեանները ար-
տահանումը, քանդելն ու փշայնելը և հուշար-
ձանները կամ նրանց բեկորներն իբրև նյութ
գործածելը նոր շինութեանների համար:

6. Հնութեաններ ունեցող վայրերում կամ
նրանց կից շրջաններում վորեն հանրագուտ շի-
նութեան (ձանապարհների, կամուրջների, ջը-
րանցքների, հասարակական պահեստների և
այլն) կառուցման դեպքում, ձեռնարկողները
պարտավոր են նախորդ ստանալ Հնութեանների
Պահպանութեան Կոմիտեղի թույլատրութեանը:

7. Հնադիտական շրջանները բոլորովին չեն
յեթարկվում հողաբաժանութեան, նրանց վրա
արգելվում և շինարարական կամ գյուղատնտե-
սական աշխատանքներ կատարել:

8. Պատահական կերպով յերևան յեկած հնու-
թեանները մասին անմիջապես պետք և հայտնել
Հնութեանների Պահպանութեան Կոմիտեղին:

9. Բոլոր վարչական մարմինների և ան-
ձանց հրահանգվում և արթուն հոկոգութեան ու-
նենալ հնութեանների պահպանութեան վրա:

10. Սույն ղեկըսալը խախտողները յենթարկվում են պատասխանատվության Բրեհական Որենսդրքի համաձայն:

11. Լուսավորության Ժողովրդական Կոմիտեի հանձնարարվում է հրատարակել համապատասխան հրահանգ սույն ղեկըսալի կիրարկության մասին:

Ժողովրդական Կոմիտեի ներքին

Նախագահ՝ Ս. Սրապիոնյան (Լուկաւի):

Ժողովրդական Կոմիտեի ներքին

Քարտուղար՝ Գ. Պարզյան

Յ Ե Բ Ե Վ Ա Ն, 18 Դեկտեմբերի 1923 թ.

Հր. «Նորճրդ. Հայաստան» № № 293, 1923 թ. Դեկտեմբ. 30. և «Հ. Ս. Ն. Հ. Դեկտեմբերի և Վորոշուհների հավաքածու» № 9 հոդ. 68.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒ-
ԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Ընդունված Լ. Ժ. Կ. կոլեգիայի 1924 թ. մարտի
20-ի նիստում)

Ա.

1. Հայաստանի Հնությունների Պահպանության Կոմիտեն կազմված է Լուսավորչական կից, համաձայն Ժողովրդային ղեկավարների 18-ի ղեկըսալի, կիրառելու կյանքի մեջ ղեկըսալում հիշված նպատակները:

2. Հ. Հ. Պ. Կոմիտեն պետական գլխավոր

սրբանն է, միակը Հանրապետության մեջ, վերին վերադասված և ամենայն իրավասություն հնությունների հաշվառման, պահպանության և պաշտպանության վերաբերյալ:

Բ.

3. Հ. Հ. Պ. Կոմիտեն ապահովում է հուշարձանների իրական և տեխնիկական պահպանությունը, գործադրելով անհրաժեշտ վարչական և գիտական միջոցներ:

4. Կոմիտեն կազմակերպում է սխտանատիկ վերահսկողություն, վերաբերյալ բնավ տեղի չունենան:

ա. հնությունների տարագրելը հանրապետության սահմաններից.

բ. հին հուշարձաններ քանդելը կամ փչացնելը.

գ. հուշարձանի, նրա վորեկ մասի կամ կտորի տեղից հեռացնելը, կամ վորեկ ձևով սեփականելը և ընկած բեկորներն իրեն նյութ գործածելը նոր շինությունների վրա:

5. Վոչ վորի, լինի նա պետական կամ հասարակական հիմնարկություն, գիտական կազմակերպություն, խմբակցություն կամ անհատ՝ չի թույլատրվում կատարել պիտուներ:

6. Վոչ վոր իրավունք չունի կատարելու վորեկ հնության նորոգում կամ վերականգնում:

Հուշարձանների տեխնիկական պահպանության համար անհրաժեշտ աշխատանքներ կատարվում են Կոմիտեի կողմից (տես հոդ. 14):

7. Բոլորովին չեն կարող տեղի ունենալ հնությունները սեղավորություններ:

8. Առանց Կոմիտեյի թույլտվության խլափախ արգելվում է առհասարակ վորեկ այլ աշխատանք՝ կապ ունեցող հնությունների հետ:

9. Հոդ. 5, 6 և 7-ում հիշված աշխատանքները կարող են տեղի ունենալ միմիայն Կոմիտեյի ղեկավարութանը, հարցը բազմակողմանի կերպով ստուգանալուց յետո:

10. Հնություններ ունեցող վայրերում կամ նրանց կից շրջաններում յիթե կարիք կա կատարելու վորեկ աշխատանք՝ ճանապարհների անցկացնել, կամուրջներ ձգել, ջրանցքներ փորել, հասարակական պահեստներ շինել և այլն, նմանորինակ հանրոգուտ ձևերով կամ ղեկավարութանը կամ վորեկ այլ շինություն կառուցանելու գեղքում, շինության ձևերով պետական թե հասարակական հիմնարկությունը կամ անհատը պարտավոր և նախորոք տեղեկացնել այդ մասին Կոմիտեյին և միմիայն նրա համաձայնությունն ստանալուց յետո սկսել աշխատանքները:

11. Կոմիտեն քննում և բոլոր հարցերը վորոնք վերաբերում են հնությունների հետ վորեկ կապ կամ առնչություն ունեցող աշխատանքներին, և տեղում ստեղծելուց յետո ընթացք և տալիս նրանց:

12. Կոմիտեն կատարում և ամբողջականաբարից ցուցակագրություն (բեգիստրացիա) Հայաստանի բոլոր հնությունների, տալով նրանց ընդհանուր նկարագրությունը, չափերը և լուսա-

նկարը. բեգիստրացիայի յենթարկվում են վոչ միայն այն հուշարձանները, վորոնք իրենց բուն տեղում են գտնվում, այլ և նրանք, վորոնք տեղափոխված են այս կամ այն հնադարանը կամ մասնավորեկ ժողովածուի մեջ, ինչպես և տարագրված մի ուրիշ յերկիր. միաժամանակ ի մի յեն հավաքվելու այդ հնությունների մասին յեղած այն բոլոր տեղեկությունները, վոր ցրված կան գրականության մեջ:

13. Կոմիտեն կազմում և Հայաստանի Հնագիտական Բարեկ:

14. Կոմիտեն տեխնիկական կազմակերպված վերահսկողութանը և մասնագիտական ստուգումներով պարզում և հուշարձանների զիմացկունության չափը և կատարում և անհրաժեշտ աշխատանքներ ասպնովելու հուշարձանների գոյությունը յեղած տեսքով, ապատելով հանդերձ հուշարձանները բնակիչներին և նրանց շրջապատն այնպիսի հավելումներից, վորոնք կապ չունեն նոցա հետ և խանգարում են նրանց պահպանությանը:

15. Կոմիտեն վորոշում, գատում և նկարագրական արձաններ, վորոնց մեջ մասնում են այն հողամասերը, վորոնք նախկին բնակությանց տեղեր են, պատմականագիտական արժեք են ներկայացնում, և ուր գեանի յերեսին կամ հողով ծածկած՝ պահվել են հուշարձաններ կամ նոցա մնացորդներ — անատեղեր (բակեր), պատեր, ջրմուղներ, գերեզմաններ և այլն:

16. Հնադիտական շրջանները հողաբաժանման չեն յենթարկվում. նոցա վրա, բացի հնադիտական աշխատանքներից, ուրիշ մի տեսակ աշխատանքներ (գյուղատնտեսական, շինարարական և այլն) ընդորոշին չեն կատարվում, իսկ առաջուց կատարվածները հեռացվում են:

17. Կոմիտեն կազմակերպում է տեղերում թե առանձին հուշարձանների և թե հնադիտական շրջանների իրական պահպանութեանը հատուկ պահակներով:

18. Կոմիտեն հուշարձանների շուրջն անխնամ թափված բեկորների և այն բոլոր հնութեանների պահպանութեան համար, վորոնք թեև շարժված են իրենց բուն տեղերից, բայց կազմված են վորոշ տեղի հետ, հիմնում է տեղային կնապարսկներ այն բոլոր տեղերում, ուր կան այդպիսի հնութեաններ: Իսկ այն կուլտուրական իրական արժեքները՝ հնադիտական, գեղարվեստական կամ կենցաղային նշանակութեան ունեցող, վորոնք չեն կապված վորոշ տեղի հետ (մանր արձաններ, քարե, մետաղե, փայտե, կավե և կտավե իրեր, ձեռագրեր, նկարներ, հին դրամներ, ինչպես նաև գործվածքներ, ասեղնագործեր և այլն)՝ հավաքում է և բեկխարացիայի յենթարկելուց յետո, վորոշում է նրանց պահպանութեան տեղը Հանրապետութեան թանգարաններում (Կենտրոնական, Եջմիածնի, Համալրարանի):

19. Կոմիտեն անորինում է նաև բոլոր պատահական կերպով յերեման յեկած հնութեանները:

ների պահպանութեան խնդիրը, վորոնց գրանցողներն այդ մասին պարտավոր են անմիջապես տեղական իշխանութեան միջոցով հայտնել Կոմիտեին և իրերն ուղարկել նրան, յեթե այդ տեղիկապես անհնար չէ:

20. Կոմիտեն հրատարակում է մտնողութեանը հուշարձանների մասին առանձին-առանձին և պարբերական հրատարակութեաններով, գիտական ու հանրամատչելի ամփոփմամբ:

Գ.

21. Կոմիտեն ունի անմիջական հարաբերութեան Լուսավորութեան ժողովրդական Կոմիտարի հետ:

22. Կոմիտեն իր վրա զբաղված պարտականութեանների կատարման համար անմիջական հարաբերութեան մեջ է մտնում իշխանութեան մարմինների և ներկայացուցիչների հետ բոլոր տեղերում և անում համապատասխան կարգադրութեաններ:

23. Կոմիտեյի նախագահին վերապահված է լիակատար իրավունք ինքնորեն կերպով անելու ամեն տեսակի կարգադրութեաններ Կոմիտեյի նպատակների իրականացման դործում:

24. Կոմիտեյի կազմը մասնագիտական և առաջին կազմը նշանակվում է Լուսավորչի կողմից գիտութեան և գեղարվեստի ձեռնհաս ներկայացուցիչներից. ապագայում կազմը փոփոխվում կամ լրացվում է իրեն՝ Կոմիտեյի առաջարկած թեկնածուներով, վորոնց հաստատում է Լուսավորութեան ժողովրդական Կոմիտարը:

25. Կոմիտեն իր կազմից ընտրում է իրեն համար նախագահ և գլխավոր քարտուղար, վեր հաստատվում են Լուսժողկոմի կազմից. ունի իր գլխավոր, նշանակում է սլաշտոնյաներ իր իրավասության տակ գանձող հնազարանների, հնազրատական շրջաններ և առանձին հնությունների պահպանության համար, և հուշարձանների տեխնիկական վերահսկողության համար հրավիրում է մշտական ճարտարագետներ, նկարիչներ և լուսանկարիչներ:

26. Կոմիտեն իր կազմից դուրս ունի նաև խորհրդատու մարմին՝ Խորհուրդ, վերին հրավիրում է Կոմիտեն իր նպատակներին համակիր, կուլտուրայի իրական մնացորդների պահպանության գործին նախանձախնդիր անհատներից, վերոնք այս կամ այն ձևով կարող են սփանդակ և աջակից լինել Կոմիտեյի գործունեության:

27. Խորհուրդը հրավիրվում է ի պահանջել հարկին Կոմիտեյի նախագահի կազմից, վերջ և ղեկավարում է Խորհրդի ժողովները:

28. Կոմիտեյի առանձին նախահաշիվը ներկայացվում է Լուսավորության Ժողովրդական Կոմիտարին ի հաստատություն: Նախահաշիվ պաշտպանության համար Կոմիտեյի նախագահին վերադանվում է իրավունք ի պահանջել հարկին մասնակցելու այն ընթացիկներին, վերակցել նրանք լինեն, յերբ քննվելու կը լինի այդ նախահաշիվը, ինչպես նաև Կոմիտեյի գործունեության հետ կապված այլ կարևոր և լայնախիղ խնդիրների քննության ղեկավարում:

29. Կոմիտեն իր նպատակների իրագործման համար վարում է գրավոր և բանավոր ազդեցիկ, կազմակերպում է դասախոսություններ, խիտարին մի անգամ ունենում է Խորհրդի հանդիսավոր նիստ, ուր ցուցադրվում են Կոմիտեյի կատարած գլխական աշխատությունները և ուր նա ապլիս և հրատարակական ղեկավարումներ իր տարեկան գործունեության մասին:

30. Կոմիտեն ունի իր անունով կնիք:

Լուսժողկոմ՝ Մուսայան

Հնությունների Պահպանության Կոմիտեյի
նախագահ՝ Թամանյան

Հնությունների Պահպանության Կոմիտեյի
գլխական քարտուղար՝ Ալխարիբյ

Հր. «Խորհրդ. Հայաստ.» № 86, 1924 թ. ապրիլ 13:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերև

Առաջաբան	3
Ծրագիր հնուրյունների ցուցակագրության յեղ նկարագրության	9
Ընդհանուր ցուցմունքներ	9
Նախապատմական կայաններ և արհեստանոցներ	11
Դերեզմաններ և զերեզմանոցներ	15
Պատանձամբ բացված դամբաններ	17
Մենհիրներ, կրճիտներ և դոլմեններ	20
Հին քաղաքատեղիներ	22
Ընտելավայրերի մնացորդներ: Դյուղեր	25
Քարայրեր: Ստորերկրյա անցքեր	27
Վիշապներ	29
Փորագրված նախեր, նկարներ, գրություններ	30
Պատանական դյուտեր: Գանձեր	32
Մոնումենտալ հուշարձաններ	34
Պաշտաման հատուկ վայրեր	36
Հին կենցաղի իրեր	37
Հրահանգ գեանի շեխին գտնված կուլտուրա- կան մնացորդների հավաքման հատար	39
Տեխնիկական ցուցմունքներ	44
Հնագիտական ֆուրս	59
Դեկրետ Հ Ս Խ Հ ժողովրդական կամխարների հաշիղի	62
Հայաստանի Հնուրյունների Պաշտամունքային կամիսեյի կանոնագրություն	64

Հայաստանի Ազգային գրադարան



NL0425887

Հայաստանի Ազգային գրադարան



NL0425887

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՎԼՈՒԹՅԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՆ

խմբագրում է և հետզհետե լույս է ընծայելու
հետևյալ հետազոտական
ՆՐԱԳԻՐՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

1. Յերկրաբանական (Ժող. Տնտ. Սորձուրդի
ծախքով):
2. Հողագիտական:
3. Կլիմայաբանական (Հողժողկոմի ծախքով):
4. Ֆենոլոգիական (Հողժողկոմի ծախքով):
5. Ինչու լեվ ինչպես պեժ է ուսումնասի-
րենք ցրեր:
6. Բուսաբանական
7. Բնուրյան տեղական քանգարան:
8. Արդյունագործական (Ժող. Տնտ. Սորձի
ծախքով):
9. Հասարակագիտական:

ՊԱՅԵՍԸ՝

Յերևան, Կենտրոնական Գաղառ-
գիտական Բյուրո, Լուսժողկոմատ.: